ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

«ԳՈՐԾ ԳԱՅԼԵՐ»

Հումորոտ ուրվագծեր

9(47.925)
Ա-77

ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

«ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ»

Համառոտ ուրվագծեր

4265

Երևան
«Հանուն հայրենիքի»
հայրենասիրական հ/կ
2010

ՀՏԴ 94/99:32:327
ԳՄԴ 63.3+66+66.4
Ա 770

ԱՎԱԳՅԱՆ ԱՇՈՏ
Ա 770 «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ»: Համառոտ ուրվագծեր.- Եր.:
«Հանուն հայրենիքի» հայրենասիր. հ/կ, 2010.- 64 էջ:

Աշխարհում նոր և բարդ քաղաքական զարգացումներ են ընթանում, որոնք մեզ պարտադրում են զգոն լինել՝ խուսափելու նոր կորուստներից: Մենք քաղաքական լուրջ խնդիրներ ունենք, որոնց լուծումը կախված է նաև «Գորշ գայլերի»՝ հակահայկական, թուրանական կազմակերպության մասին մեր ունեցած տեղեկատվությունից, հարցի իմացության խորությունից:

Այս աշխատանքը ևս մի քայլ է իմացության ճանապարհին, և հույս ունենք՝ հայ ընթերցողին օգտակար կլինի:

ԳՄԴ 63.3+66+66.4

ISBN 978-99941-2-369-8

© Ավագյան Ա., 2010 թ.

Միությունները շահերի և նպատակների ընդհանրության արտահայտությունն են: Ես չգիտեմ՝ ունե՞նք մենք արդյոք քաղաքականության մեջ որևէ գիտակցված նպատակ կամ մտադրություն. բայց որ մենք ունենք շահեր, այդ մասին արդեն մեզ կհիշեցնեն ուրիշները:

Օ.Բիսմարկ

2009 թ. մարտի 29-ին Թուրքիայում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Գորշ գայլերը» գրավեցին 3-րդ տեղը:

Ամուլում «Գորշ գայլեր» (Bozkurt) ահաբեկչական-մաֆիոզ թուրքական ծայրահեղական աջակողմյան կազմակերպության մասին սակավ նյութեր են հրատարակված, որի պատճառը իրենք՝ «Գորշ գայլերն» են. նրանք աշխատում են, որ աշխարհում չտարածվի իրենց կազմակերպության իրական պատկերը, քանի որ դա բացասաբար կազդի իրենց, հատկապես երկրից դուրս գործող իրենց մասնաճյուղերի վրա: Բանն այն է, որ այլ երկրներում նրանք հիմնականում կազմակերպվում են մշակութային, սպորտային և ասիմիլյացիային նպաստող կազմակերպությունների տեսքով: Եվ նրանք այդ երկրներից մեծ գումարներ են ստանում, որպեսզի օգնեն տեղի ժողովուրդների հետ թուրքերի ինտեգրմանը: Իրականում, սակայն, այդ ֆինանսական միջոցները ոչ միայն չեն նպաստում ինտեգրման ընթացքին, այլև օգտագործվում են ազգայնամոլական, պանթուրքական ծրագրերի իրագործման նպատակով: Երբեմն տվյալ երկրի իշխանություններին հայտնի է դառնում այդ իրողությունը, բայց նրանց կարծիքով «կարևորը նրանց արտաքին վարվելակերպն է, իսկ թե իրականում որտեղ կծախսվեն այդ ֆինանսական միջոցները, այդտեղ մենք ոչինչ անել չենք կարող»: Այնինչ «Ուլքյու օջաքլար» գաղափարապաշտական օջախնե-

րի անդամների մոտ կա սիրված ասացվածք. «Այն, ինչ չհաջողվեց անել օսմանցիներին սրի միջոցով, այն է՝ գրավել Արևմուտքը, հաջողվեց անել թուրք միգրանտներին»:

Նրանց գործունեությունը ուղղված է երկրի ներսում ժողովրդավար ուժերի և ազգային փոքրամասնությունների, երկրից դուրս՝ թշնամական երկրների, պանթուրքիզմի (թուրանչիլիքի) ծրագրերի իրականացմանը խոչընդոտող անձանց դեմ: Որոշ տեղեկություններ իրենք իրենց մասին տալիս են ինտերնետային Bozkurt.net վեբ-կայքում, որտեղ Գորշ գայլի էպոսն է, «Գորշ գայլերի» հիմնը, քայլերգը, այլ երգերի ու բանաստեղծությունների տեքստեր, սակայն առավել նշանակալից էջերը բաց են միայն կազմակերպության անդամների համար. դրանցից կարելի է օգտվել հատուկ ծածկանուններով և գաղտնաբառով:

Հակահայ գործունեություն է վարում հատկապես «Գորշ գայլերի» ադրբեջանական մասնաճյուղը: Ելնելով այս ամենից, որ, ինչպես նշվում է «Ակոս» թերթի 2008 թվականի փետրվարի 1-ի համարում, աճում է հետաքրքրությունը հայերենի, ըստ իս՝ նաև հայերի նկատմամբ: Հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում է. «Նևշեհիր համալսարանի գիտական-գրական ֆակուլտետում հայերենի, եբրայերենի և հունարենի բաժինների հաստատման համար հատուկ դիմում է հղվել բարձրագույն ուսումնական խորհրդին: Եթե խորհուրդն այն վավերացնի, Թուրքիայի մեջ առաջին անգամ հիմնված կլինի հայերենի ամբիոն»: (Թեև լուրը այսպես է հաղորդվել լրատու գործակալությունների կողմից, սակայն արժե հիշեցնել, որ նման ծրագիր կիրառվել է Ստամբու-

լի համալսարանում):

Նշեհիր համալսարանի գիտական-գրական ֆակուլտետի տեսուչ պրոֆ. Մեթին Հիվլակիվը հայտարարել է, թե Թուրքիայի մեջ շատ քիչ է հայերեն, հունարեն և եբրայերեն իմացողների թիվը, և այս լեզուներին տիրապետող մասնագետների պահանջ կա:

Ավելացրել է նաև, որ մայիսին, Կեսարիայի Էրչիսեյ համալսարանի հետ համագործակցելով, պետք է կազմակերպվի «Հայ-թուրքական հարաբերություններ» թեմայով գիտաժողով:

«Հայաստանի, Իսրայելի և Հունաստանի հետ հարաբերություններ ունենք: Գոյություն ունեն խնդիրներ, հասարակական հարցեր և անհամաձայնություններ: Այս նյութերի շուրջ առողջ երկխոսության համար կարիք կա այս երկրների լեզուներն իմացողների, որոնց թիվը խիստ անբավարար է:

Այս ամբիոնը բացելով՝ մտադրություն ունենք նախ այդ պահանջը բավարարել, ապա այդ երկրների հետ հարաբերություններ զարգացնել և համատեղ գիտական ուսումնասիրություններ կատարել:

Հայաստանի հետ վերջերս վեճի նյութ դարձած իբր ցեղասպանության հարցով Դաշնակցություն կուսակցության արխիվների բացվելը օրակարգի հարց է: Կարծածից քիչ է հայկական արխիվներն ուսումնասիրելու ընդունակ մասնագետների թիվը: Այս ախիվներից օգտվելու համար քանի՞ մասնագետ ունենք: Թիվը շատ սահմանափակ է: Իսրայելը տարածաշրջանի մեջ կարևոր երկիր է: Իսկ Հունաստանի հետ, իբրև դրացի երկրի, երկար տարիներ է, ինչ չունենք ջերմ հարաբերություններ:

Այս բաժնի միջոցով պետք է հաջողեցնենք նախ գիտական, ապա մշակութային համագործակցություն»:

Ահա հայերով և հայերենով հետաքրքրված լինելու ևս մի փաստ. 2001 թ. ամռանը Անկարայում հիմնվել է «Հայկական հետազոտությունների ինստիտուտ» կազմակերպությունը: Այն գործում է Թուրքիայի «Եվրասիա» ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնին կից: Վերջինս Թուրքիայում ռազմավարական ուսումնասիրություններ իրականացնող խոշոր կենտրոններից մեկն է: Ըստ առկա տեղեկությունների՝ կառույցը հովանավորվում է Թուրքիայի «Ազգայնական շարժում» (MHP) կուսակցության կողմից:

Հայկական հետազոտությունների ինստիտուտի կայք-էջն է www.eraren.org, «Եվրասիա» ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի կայքում՝ www.avsam.com.tr, տեղադրված է Հայկական ինստիտուտի լինքը: Կառույցը 2001 թ. հրատարակում է «Հայկական հետազոտությունների հանդես» թուրքերեն հանդեսը, որը լույս է տեսնում տարին 4 անգամ: 2002 թ. հրատարակվում է նաև հանդեսի անգլերեն տարբերակը՝ «Review of Armenian Studies»:

Կառույցը գործում է Կոնրադ Ադենաուեր 61 550 հասցեում՝ Անկարայի Չանկայա թաղամասում: Նույն թաղամասում է նաև Թուրքիայի նախագահի աշխատավայրը: Բավականին զավեշտալի է, որ մերժողականություն տարածող կազմակերպությունը տեղակայված է Կոնրադ Ադենաուերի անունը կրող պողոտայում, որն, ինչպես հայտնի է, ետպատերազմյան Գերմանիայում դրեց ֆաշիստական ոճիրները «առերեսելու» և «ապաշխարանքի» քաղաքականության հիմքը:

2002-2004 թթ.կառույցը կազմակերպել է Հայկական հետազոտությունների կոնգրես: Կառույցում գործում է հայկական հարցի թեմայով աշխատանքային գրադարան, որն ունի ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, հայերեն և թուրքերեն գրականություն: Կառույցն ունի նաև թեմատիկ վիդեո-արխիվ: Ամառային ամիսներին ինստիտուտում կազմակերպվում է թուրք ուսանողների աշխատանքային պրակտիկան: Կառույցի ներկայիս ղեկավարն է պաշտոնաթող դիվանագետ Օմեր Էնգին Լյութեմը:

Թեև կառույցը կոչվում է Հայկական հետազոտությունների ինստիտուտ, սակայն գործառույթներով լիովին չի համապատասխանում անվանմանը: Հայկական քաղաքակրթության, մշակույթի, պատմության թեմաներով օբյեկտիվ ուսումնասիրությունների մասին խոսք լինել չի կարող: Կառույցն իրականացնում է գերազանցապես մերժողական բնույթի աշխատանքներ Մեծ եղեռնի հարցում, զբաղվում է հայկական սփյուռքի քարոզչական, հասարակական- քաղաքական գործունեության, տնտեսական կարողությունների ուսումնասիրությամբ: «Ինստիտուտի նպատակն է՝ աչքի առջև ունենալով Հայկական հարցի պատմական, հոգեբանական, իրավական և միջազգային բաղադրիչները՝ ուսումնասիրել հարցը լայն ընդգրկումով»,- նշված է կազմակերպության կայքում:

2007 թ. կառույցը հրատարակել է «Հայկական հարց. հիմնական տվյալներ և փաստաթղթեր» աշխատությունը, որում ներկայացված են Մեծ եղեռնի խնդրի վերաբերյալ թուրք և ամերիկացի «պատմաբանների» մերժողական բնույթի հոդվածներ:

2003-2004 թթ. կազմակերպության ղեկավար նշանակվեց Հասան Օքթայը: Այդ ընթացքում փորձ արվեց հրաժարվել «արմատական, մերժողական» կեցվածքից, փորձ արվեց շտկումներ մտցնել այս ծայրահեղական մոտեցումների մեջ: Օքթայի լիբերալ մոտեցումները սուր դժգոհություններ առաջացրին թուրքական ծայրահեղական շրջանակներում, որոշակիորեն լարվեցին Հայկական հետազոտությունների ինստիտուտի և Թուրքիայի պատմության ինստիտուտի հարաբերությունները: 2004 թ. տարեվերջին Հասան Օքթայը հեռացվեց աշխատանքից:

Հատուկ ուշադրության է արժանի 2007 թ. Անկարայում հրատարակված «Սովորում եմ հայերեն» խորագրով հայոց լեզվի ինքնուսույցը: Ըստ կայքի՝ այն Թուրքիայում արևելահայերենի առաջին ինքնուսույցն է: Հեղինակն է Բիրսեն Քարաջան: Բաղկացած է 160 էջից, 18 առանձին դասերից: Ուշադրության է արժանի նաև նույն Բիրսեն Քարաջայի հրատարակած «Արևելահայերեն-թուրքերեն» բառարանը՝ բաղկացած 372 էջից:

Հայկական կողմն առայսօր առավելություն ունի Թուրքիայի հանդեպ. Հայաստանում զարգացած է թուրքագիտությունը, կան որոշակի թվով մասնագետներ: Սակայն Թուրքիայում հայագիտությունը չի զարգացել: Անկարան փորձում է լրացնել բացը: (Անկարայի Հայկական հետազոտությունների ինստիտուտ, Հայկարամ Նահապետյան, 09 հոկտեմբեր 2008 թ., noravank.am):

Ըստ www.irevan-az.com կայք-էջի՝ Հաթամ Ուլիխանլը (Եվրասիայի Անվտանգության և ռազմավարական կենտրոնի նախագահ, քաղաքական գիտությունների դոկտոր) 1/29/2009 թ. ասել է, որ Թուրքիայում ամենապրոբլեմային էթնիկ խմբերը հույներն ու հայերն են եղել: Մինչև 1940-ական թթ. Թուրքիայի և Հունաստանի միջև

ստորագրված երկկողմանի պայմանագրերի համաձայն՝ հույներին Հունաստան, թուրքերին էլ Թուրքիա վերաբնակեցնելով, այդ խնդիրը հիմնականում լուծվել է: Իսկ Հայկական հարցը, մինչև 1970-ական թթ. վերջերը «անաղմուկ» մնալով հանդերձ, ավելի ուշ, ի դեմս «ԱՍԱԼԱ» ահաբեկչական կազմակերպության, Թուրքիայի համար լուրջ խնդիրներ է ստեղծել, և այդ սպառնալիքն այսօր էլ շարունակվում է: Սակայն հայերը Թուրքիայում բավականին ուժեղ են. Թուրքիայում կրիպտո հայերի առանձնապես մեդիայում ուժեղ դիրքեր ունենալը իրոք ճշմարտություն է: Ռադիկալ թերթերում և մի շարք մամլո օրգաններում հայերի և Հայաստանի դեմ որևէ խոսք տպագրել հնարավոր չէ:

«Գորշ գայլեր» կազմակերպության ստեղծման պատմությունը, անվան ծագման պատմությունը, գործունեությունը արդի աշխարհում և քաղաքականության մեջ ունեցած դերը

Bozkurt.net վեբ-կայքից և Գումլիևի «Դրեվնիե թյուրքի» (Гумлиев, ,,Древние тюрки") գրքից իմանում ենք, թե ինչ է Գորշ գայլը:

Բերնեբերան անցած թուրքական դիցաբանություն, որը հետո գրի առնվեց ու դարձավ թուրքերին հաղթանակների տանող խորհրդանիշ: Գորշ գայլը թուրքերի համար նույնն է, ինչ անգլիացիների համար առյուծը, ռուսների համար՝ արջը, պարսիկների համար՝ վագրը, ճապոնացիների համար՝ ծովահրեշը, իտալացիների համար՝ Հռոմի գայլը, տիբեթցիների համար՝ որձ կապիկը, ամերիկացիների համար՝ արծիվը:

Bozkurt.net վեբ-կայքից: Ամեն ազգի պատմությունն սկսվում է մեկ կամ մի շարք էպոսներով: Գրավոր խոսքի ներմուծվելուց առաջ կային էպոսներ, որոնք բերնեբերան փոխանցվում էին սերնդեսերունդ: Ինչպես ամեն մի ազգի էպոս, թուրքական էպոսը նույնպես չի գրվել մեկ հոգու կողմից: Երկար ժամանակ որպես հեքիաթներ և պատմություններ են գոյություն ունեցել, որոնցից մի քանիսը հրատարակվել են առանձին գրքույկով: Այսպիսով՝ 8-10 էպոս է հավաքվել մեկտեղ: Դրանք հետո ավելացվել և զետեղվել են 1 գրքում՝ ներառելով արդեն 15-20 էպոս, և գրվել է մի ավելի մեծ դիցաբանական գիրք:

Վեբ-կայքում գրված է նաև. «Ամեն կրթված մարդ, որը չի ընդունում Գորշ գայլին, նշանակում է՝ չի ճանաչում, ժխտում է ազգային պատմությունը, իսկ իր ազգը և ազգությունը չհարգողին ոչ ոք չի հարգի»: Պատահական չէ, որ վեբ-կայքի հենց առաջին էջում է տեղադրված հետևյալ քառատողը.

BOZKURT

BOZKURTLARIN KUR'ANI VAR,
ALLAHIDIR ONA TEK YAR,
GÜLLERINE YAGMASIN KAR,
ÍMANLARI SÖNMEDÍKÇE!

ԳՈՐՇ ԳԱՅԼ

Ղուրան ունեն Գորշ գայլերը,
Ալլահն է նրանց միակ յարը,
Թող չիջնի նրանց ժպիտներին ձյունը,
Միչև որ չմարի նրանց հավատքը:

Մոտենալով Խունական դարաշրջանին, արդեն Գորշ գայլը մեր առջև ավելի է կարևորվում: Այն արդեն միայն հոգևոր Հայր չէ կամ միայն դրոշի վրա եղած ազգային մի խորհրդանիշ: Այս ամբողջի հետ արդեն Գորշ գայլը (հին թուրքերենում *Գորշ գայլին* անվանում են Քյոք-Բյորի) որպես մի աստվածային ուժ, բանակին ճանապարհ ցույց տվող ուղեկցորդ, դժվարության մեջ մնացածին վազող-հասնող մի օգնական է:

Գորշ գայլի էպոսներից մեկը

(Չինական աղբյուրներից...):

«...Թուրքերի նախնիները բնակվել են Արևմտյան ծովի արևմտյան ափին: Թուրքերը ջարդվում են Լին անվամբ երկրի բանակի կողմից: Սպանում են բոլորին, բացի մի 10-ամյա տղայից, որին Լին երկրի զինվորները խղճում են, ձեռքերը-ոտքերը կտրելով՝ նետում են մի ճահճուտ: Իմանալով այդ մասին՝ Լին երկրի տիրակալը հրամայում է սպանել նրան նույնպես, որ թուրքերի արմատը վերջնականապես կտրվի...:Թշնամու զորքերը երեխային գտնելու համար ճամփա են ընկնում: Բայց մի էգ գորշ գայլ, երեխայի ծոծրակից ատամներով բռնելով, փախցնում է Ալթայ: Ալթայի լեռների մի քարանձավում, որտեղ անտառ կար, պահում է երեխային: Վերքերը լիզելով, խնամելով բուժում է: Տղան շուտով ամուսնանում է: Ծնվել են 10 երեխաներ, որոնք էլ, ուրիշ աղջիկների հետ ամուսնանալով, բազմանում են, բանակ են ստեղծում, հարձակվում Լին երկրի վրա և լուծում նախնիների վրեժը: Ստեղծվում է մի հզոր պետություն, որը

տիրում է շուրջբոլորը: Եվ խաները, իրենց նախնիների մոր հարգանքից դրդված, իրենց զարդարված վրաններ-ի առջև գայլի գլխով մի դրոշակ են ամրացնում:

Այդ խորհրդանիշը հետագայում գործածվել է նաև Աթաթուրքի կառավարման ժամանակի թուրքական տարադրամի վրա, որով «գորշ գայլերը» փորձում են Աթաթուրքին նույնպես «գորշ գայլ» ներկայացնել: Bozkurt.net վեբկայքում կա տեղեկություն նաև այն մասին, թե իբր թուրքերը հին երկաթագործներ են: Եվ այսպիսի տողեր. «...Թրքությունը չի մոռացել և պահպանում է իր ազգային արժեքները և խորհրդանիշները: Թուրք ազգայնականները երբեք չեն մոռանալու և շարունակելու են ապրեցնել դրանք: Մինչև երկրի կանգ առնելն էլ, Լուսինն ու աստղով կարմիր դրոշը շարունակելու են ծածանվել երկնքում, ու Գորշ գայլը շարունակելու է մնալ որպես թրքության անկախության ու ազատության խորհրդանիշ»:

Գումլիևի „Древние тюрки" գրքում զետեղված է Գորշ գայլի առաջին լեգենդը, որտեղ նշվում է. «Խունի տան շրջանից մինչև Արևմտյան շրջանը», այսինքն՝ Աթիլլայի տերությունը (որն իր ամենահզոր ժամանակաշրջանում իրեն է ենթարկել Արևելյան Հռոմեական կայսրությունը, Կապադովկիան, բնաջնջել Սիրիան), գրեթե ամբողջովին ավերվում է հարևանների կողմից. փրկվում է միայն մեկ 9-ամյա տղա, որին թշնամիները ձեռքերն ու ոտքե-

ը կտրելուց հետո նետում են ճահճի մեջ: Այնտեղ նրանից հղիանում է մի էգ գայլ: Վերջիվերջո տղային սպանում են, իսկ էգ գայլը փախչում է Ալթայ և այնտեղ ծնում է 10 տղայի. ազգը մեծանում ու զորանում է»:

Եվ այսպես, ըստ այս լեգենդի, թյուրքերն առաջացել են արևմտյան հոներից: Սրանք եղել են քոչվոր ցեղեր՝ ձևավորված 2-4-րդ դարերում, այժմ՝ որպես ժողովուրդ, ըստ էության չկան, բայց դեռևս մերձսևծովյան որոշ քոչվոր ցեղերի հանդեպ օգտագործվում է այդ անվանումը:

Իսկ ըստ երկրորդ լեգենդի՝ թյուրքերն առաջացել են տեղական Սո ցեղից ու նորից էգ գայլից: Ողջ ցեղը մահանում է իր հիմարությունից (պատճառը չի բացատրվում), և միայն էգ գայլի 4 թոռներն են փրկվում: Մեկը վերածվում է կարապի, երկրորդը բնակվում է Աբու (Աբական) և Գյան (Ենիսեյ) գետերի մեջտեղում, իսկ երրորդն ու չորրորդը Չուսի (Չուի) գետերում՝ հարավային Ալթայում:

5-րդ դարում թյուրք էր անվանվում իշխան Աշինայի («Աշինա» հին չինարենով «բարի գայլ» է նշանակում) շուրջ հավաքված հորդան, որը 6-8-րդ դարերում կազմում էր ոչ մեծ մի ժողովուրդ, որն արդեն խոսում էր թյուրքերեն (Մեթեի դինաստիային՝ Աշինայի տղաներին, կոչում էին Բոգքուրթ- սուլթաններ. իբր նրանք սերում էին Գորշ գայլից): Իսկ ինքը՝ թյուրքալեզու շրջանը, ձգվում էր արդեն Ալթայից արևմուտք՝ այն երկրները, որտեղ ապրում էին ղազերը, պեչենեգները, հին բուլղարներն ու հոները:

Հրաչիկ Սիմոնյանի «Թուրֆ-հայկական հարաբերությունների պատմությունից»

Հայտնի պատմաբանի գրքում կարդում ենք. «1944 թ. հունվարին լույս տեսավ Օ. Թյուրքանի «Նացիոնալիզմի ճանապարհին» գիրքը, որի մեջ հեղինակը թուրքիզմը համեմատում է ֆաշիզմի հետ, կարծում, որ դրանք նույն իմաստն ունեն: «Թուրքիզմը,- գրում էր նա,- թուրքական նացիոնալիզմն է, որ գոյություն ունի Թուրքիայում, ինչպես Գերմանիայում գոյություն ունի նացիոնալ-սոցիալիզմ»: Այնուհետև նշում է. «Թուրքիզմը, ինչպես և ամեն նացիոնալիզմ, հետապնդում է ազգային դաշինքի գաղափարը...»:

Նույն թվականին լույս է տեսնում նույն Թյուրքանի «Դեպի թուրքիզմի ուղին» գիրքը, որտեղ հեղինակը գրում է, թե թուրքերին քաղաքականապես բաժանել են դժբախտ դեպքերն ու իրադարձությունները և որ անհրաժեշտ է նորից միավորել նրանց: Իսկ ո՞վ պետք է ստանձնի միավորողի դերը, եթե ոչ՝ գորշգայլական թուրքիզմը: Գրքի «Գորշգայլականների կանոնադրությունը և երդումը» գլխում Թյուրքանը գրում է: «Ո՞վ ենք մենք: Գորշգայլականնե՛ր: Մեր գաղափարախոսությու՞նը: Թուրքի՛զմ: Ինչի՞ն են հավատում գորշգայլականները: Մյուս բոլոր ռասաների ու ազգերի նկատմամբ թուրքական ռասայի ու թուրքական ազգի գերազանցությանը: Արդյո՞ք գորշգայլականները պանթուրքական են: Այո՛: Գորշգայլական թուրքիզմի սուրբ իդեալն է՝ Թուրքիան ընդարձակել: Ի՞նչ իրավունքների վրա է խարսխվում այդ սկզբունքը: Գորշգայլականներն արդեն վաղուց հռչակել են. «Իրավունքը չի տրվում, այն վերցվում է»

սկզբունքը: Այսինքն՝ դուք առաջարկում եք պայքա՞ր: Այո՛: Պատերազմը բնության օրենքն է, մենք՝ ռազմիկների սերունդ...»:

Գրքի տարբեր էջերում Օ. Թյուրքանը գովերգում է «թուրքական ռասան», նրա «բարեմասնությունները», զարգացնում թուրքերի «ընտրյալ» լինելու մասին գաղափարը: Նրանք նույնիսկ առաջ անցան իրենց հոգևոր ուսուցիչ Զիա Գեոքալփից»:

Թուրքական պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր Զիա Գեոքալփը, դեռևս օսմանական ժամանակաշրջանում գործադրեց «Ազգային իդեալ» հասկացողությունը (Milli mefkure), որը հետագայում, 1930-ական թթ., լայն տարածում գտավ պանթուրքիստների մոտ: Այդ բառի համարժեքն է ulku-իդեալ (գաղափար), որը սակայն գործադրվեց 1960-ական թթ. Ա. Թուրքեշի կողմից (ulku ասելով նկատի ունեին Թուրան գաղափարը):

Ստելլա Բրամի, Մեհմեթ Ուլգերի հրատարակած «Գորշ գայլեր» գրքում կարդում ենք կազմակերպության հիմնադրի և հիմնադրման մասին: Ալփարսլան Թյուրքեշին «Գորշ գայլերը անվանում են Բաշբուղ (ղեկավար), ինչը և հետագայում դարձավ Թյուրքեշի կոչումը (տիտղոս): Ասենք, որ այդպես էր սիրում իրեն անվանել նաև Էնվեր փաշան: «Բաշբուղ» անվանումը համապատասխան է ֆաշիստական կուսակցությունների տիտղոսներին. Գերմանիայում՝ ֆյուրեր, Իտալիայում՝ դուչե):

Ալփարսլան Թյուրքեշը ծնվել է 1917թվականին, Կիպրոսում, իսկական անունն է Հուսեին Ֆեյզոլլահ: Նա 1938 թ. դարձավ բանակի սպա:

Ալփարսլանը այն սուլթանի անունն է, որը 1071 թ. հաղթեց Բյուզանդիային ու հիմք դրեց Օսմանյան կայսրությանը, իսկ Թյուրքեշ նշանակում է «թուրքերի ընկեր, բարեկամ»:

Նա դեռ երիտասարդ տարիքից տարվել է պանթուրքիզմի գաղափարներով: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքեշը ցանկացավ (ըստ որոշ ինտերնետային ռուսերեն վեբ-կայքերի՝ նույնիսկ համագործակցեց Գերմանիայի հետախուզության հետ) միանալ Հիտլերին՝ թուրանիզմի գաղափարը իրականացնելու հույսով: Նա չէր թաքցնում, որ Հիտլերի գաղափարները, ինչպես, օրինակ՝ ցեղերի-ռասաների մասին նրա դիրքորոշումը, իրեն դուր է գալիս: Այնտեղ, երբ Հիտլերն օգտագործում էր «բարձր, ազնիվ» ցեղ որակումը, Թուրքեշն օգտագործում էր «Ասիլ թյուրքլեր» (իսկական թուրքեր) բառակապակցությունը:

1944 թ. մայիսին Բաշբուղին և Նիհալ Աթսըզին մեղադրեցին ռասիզմի ու հակակառավարական շարժման մեջ, բայց նրանց շուտով ազատ արձակեցին:

1944 թ. դատավարությունից հետո գորշ գայլերը սկսեցին կազմակերպվել մշակութային ու սպորտային միությունների տեսքով և այդ անվան տակ լույս ընծայել

4265

իրենց մամուլը: 1944 թ. ազատ արձակված Թյուրքեշը վերադարձավ բանակ:

Շարժման ոգին իրականում **Նիհալ Աքսըզն** էր, որի մասին «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» գրքում կարդում ենք, թե ինչպես է ռասիզմի այդ մարդատյաց ամենամոլի քարոզիչը պահանջում ընդօրինակել Հիտլերի գործելակերպը և թուրքական ռասան մաքրել ոչ թուրք տարրերից: «Ես գտնում եմ,- գրում էր նա,- որ Թուրքիայում պետք է տիրապետի թուրքական ռասան. ով ուզում է թուրք կոչվել, պետք է ապացուցի իր արյան մաքրությունը մինչև երեք պորտը»: «...Ոչ թուրքերը պետք է դուրս շպրտվեն Թուրքիայից: Ոչ մի ոչ թուրք չպետք է լինի ո՛չ պետական կառավարման մեջ, ո՛չ սպայական կորպուսում...»: Իր որդուն թողած հոգևոր կտակի մեջ Աքսըզը գրել է. «Ազգը արյուն է, ուստի ոչ թուրքական ռասայի մարդկանց թուրքեր մի՛ համարիր: Ոչնչացրու՛ նրանց՝ հանուն դրա վտանգելով նույնիսկ կյանքդ»:

Բաշբուղը, ինչպես նշվում է Ստելլա Բրամի և Մեհմեթ Ուլգերի գրքում, 1948 թվականին ուղարկվեց ԱՄՆ, ուր ստացավ զինվորական ու տնտեսագիտական կրթություն: Հետո անցավ Գերմանիա՝ միջուկային պատերազմի ռազմավարման ուսուցում ստանալու: 1950- ականներին նա արդեն ՆԱՏՕ-ում ներկայացնում էր Թուրքիան: 1960-ին արդեն ուներ գնդապետի աստիճան:

Նոր զարգացումներ

1960 թ. մայիսի 27-ին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ բանակն ուղղակիորեն միջամտեց քաղաքական կյանքին. սպայակազմի մի խումբ անդամներ (Թ. Այդեմիր, Դ. Սեյհան, Օ. Էրքանը, Ֆ. Գյուվենքյուրք, Ա. Թյուրքեշ, Ս. Մոչաս, Ն. Էսին, Ս. Քարաման և այլն) կազմակերպեցին և իրականացրին ռազմական հեղաշրջում: Մայիսյան հեղաշրջումն ուներ *նախածեռնողական* բնույթ. այն չիրականացվեց բանակի ղեկավարության կողմից, ինչպես դա տեղի ունեցավ զինվորականների հետագա «միջամտությունների»՝ 1971 թ. ու 1980 թ. հեղաշրջման ժամանակ: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին ու իրականացրին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող սպաները. բանակում խախտվեց աստիճանակարգային կարգապահությունը: Մեհմեթ Ալի Բիրանդը նշում է, որ թուրքական բանակում հատուկ ուշադրություն է հատկացվում աստիճանակարգային կարգապահությանը (rutbeye disiplin). այն քննադատում է «նախածեռնողական գործողությունները» և պարտադրում գործել «հրամանի սկզբունքով», ինչը ենթադրում է անքննելի ենթակայություն առավել բարձր աստիճան ունեցող սպաների հրամանին: Երկրում ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ «Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ) (Milli Birlik Komitesi) ձեռքը՝ գեներալ Ջեմալ Գյուրսելի ղեկավարությամբ: ԱՄԿ գործունեության արդեն առաջին իսկ ամիսներին լուրջ հակասություններ առաջացան նրա անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն բաժանվեց 2 թևի՝ պահպանողականների և ար-

մատակարարների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին գտնվում ԱՄԿ-ի անդամ գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ նոր ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին (այս խմբի մեջքին կանգնած էր փորձառու Իսմեթ Ինյոնյուն): Ի դեպ, Իսմեթ Ինյոնյուն 1943 թ.՝ 2-րդ աշխարհամարտի թոհուբոհին, Թալեաթի աճյունը Գերմանիայից բերել տվեց և ամփոփեց Ազատություն կոչվող բլրի վրա, թերևս որպես հակահայ քաղաքականության խորհրդանիշ (Իսմեթ Ինյոնյուն Թալեաթի քրոջ ամուսինն էր): Իսկ ԱՄԿ-ի արմատական անդամները գտնում էին, որ միայն Դեմոկրատական կուսակցությանը իշխանությունից զրկելով՝ զինվորականության առաքելությունը չի ավարտվում, և զինվորականները պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում՝ երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար:

Պահպանողականները այդ պայքարում հաղթանակ տարան, և նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու փորձերի համար հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից: Նրանց մեջ էր պանթյուրքիստ Ալփարսլան Թյուրքեշը: Նա մյուս համախոհների հետ, որոնք մասնակցել էին պետությանը զինված հարված հասցնելու անհաջող փորձին, «աքսորվեց» Հնդկաստան՝ դիվանագիտական պաշտոնով:

Այսպիսով՝ **1965-74 թթ. այն ժամանակաշրջանն էր, երբ կազմավորվեց «Գորշ գայլեր» կուսակցությունը:**

1965 թ., իր վերադարձից 3 ամիս հետո, Թյուրքեշը

դարձյալ մասնակցեց պետությանը հարված հասցնելու ևս մի փորձի, որը կրկին ձախողվեց: Թյուրքեշը դատարանից ազատվեց իբր թե փաստերի բացակայության պատճառով: 1965-ին, 3 այլ նախկին աքսորյալների հետ, մտավ «Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության» (CKMP - Ջյումհյուրիյեթչի Քյոյլու Միլլեթ Փարթիսի) մեջ, վերցրեց այն իր ազդեցության տակ, դարձավ նրա ղեկավարը: 1969 թ. այն արդեն վերանվանվեց «Ազգային շարժման (գործողության) կուսակցություն» (MHP - Միլլիյեթչի Հարեքքեթ Փարթիսի): Այսինքն՝ «Գորշ գայլեր» կուսակցություն:

Բաշբուղ Թյուրքեշի «Թեմել Գյորուշլեր» (Հիմնական տեսակետներ) գրքում կարդում ենք. «Հենց այսօր՝ մեր օրերում, Երկրագնդի ողջ տարածքում մղվում է չհայտարարված, բայց ահավոր մի պատերազմ, պատերազմ տարբեր ազգերի միջև, պատերազմ մշակույթների միջև: Կարելի է գրավել մի ազգի բազում ամրոցներ ու բերդեր, բազմիցս պարտության մատնել բանակին, բայց այնքան ժամանակ, քանի դեռ նրա սիրտն ու հոգին չես գրավել, այդ ազգը չես նվաճել: Անժխտելի իրականություն է, որ մարդ այն ազգի մասն է կազմում, որին ինքն է նախընտրում պատկանել: Մշակութային պատերազմում յուրաքանչյուր ազգ ջանում է ոչնչացնել մյուս ազգերի լեզուն, կրոնը, ավանդույթները, ազգային ու հոգեկան արժեքները ու դրանք փոխարինել իր մշակութային արժեքներով»:

Ալփարսլան Թյուրքեշը իր «Դոքուզ Ըշըք» («9 ջահ») գրքում նշում է այն 9 կետերը, որոնց իրագործումից հետո երկիրը կծաղկի: 1-ը՝ «Միլլիյեթչիլիք» (ազգայնականություն), 2-ը՝ «Ուլքյուջուլուք» (գաղափարապաշ-

տություն), 3-ը՝ «Ահալչըլըք» (բարոյականություն), 4-ը՝ «Թոփլումչուլուք» (սոցիալականություն), 5-ը՝ «Իլիմչիլիք» (գիտություն, գիտականություն), 6-ը՝ «Յուրիյեթչիլիք» (Ազատություն, ազատականություն), 7-ը՝ «Քյոյջուլուք» (հոգատարություն գյուղացու, գյուղի նկատմամբ), 8-ը՝ «Գելիշմեչիլիք վե հալքչըլըք» (զարգացում և ժողովրդավարություն) և վերջապես 9-ը՝ «Էնդուստրեչիլիք վե թեքնիքչիլիք» (արդյունաբերություն և տեխնիկա):

«Գորշ գայլերի» մի մասի կարծիքով Բաշբուղ Թյուրքեշը սխալվել էր, երբ իրենց խնդիրների լուծման համար չէր թողնում, որ իրենք դիմեն զենքի: Ըստ նրանց՝ ճիշտ չէր գործել նաև Ադրբեջանի նախկին նախագահ Էլչիբեյը: Նրանք ասում էին. «Ադրբեջանում նախագահ Էլչիբեյը սխալվել է, երբ կառավարման համակարգում չի վերացրել կոմունիստներին ու դավաճաններին»:

Իմիջիայլոց, Չեչնիայում չեչենների կողմից կռվել են 5-6 հարյուր «MHP»-ականներ:

«Գորշ գայլերը» նշել են նաև. «Երանի թե օսմանցիները դեպի արևմուտք կատարած իրենց արշավանքների ժամանակ Իրանն էլ գրաված լինեին: Մենք այլևս ստիպված չէինք լինի գործ ունենալ մեր արևելքում ծվարած այս բուֆերային երկրի հետ»: Իսկ ալևիներին հաճախ կասկածում են ծախակողմականության ու քրդասիրության մեջ, թեև «լավ» ալևիներ էլ կան: 1992 թ. Սիվաս քաղաքում հրդեհվեց մի հյուրանոց, որտեղ 37 մտավորականներ ու արվեստագետներ, մեծ մասամբ ալևիներ, կենդանի վառվեցին, մինչդեռ ոստիկանությունն անհոգ հանդիսատեսի դեր էր խաղում:

«Լավ» ալևիներից մեկը ժողովներից մեկում նշել էր.

«Մենք՝ ալևիներս, որպես Ահմեդ Եսևիի սերունդ, զտարյուն թուրք ենք»: Ահմեդ Եսևին ալևիզմի Բեկթաշ ճյուղի նախահայրն էր:

Թուրքիայում էրչիսեյ լեռան վրա, կատարվում է «Լեռնագնացություն-տոնահանդես» միջոցառումը, որն իրականում «Գորշ գայլերի» հավաք է: Ատենախոսներից մեկն ասում է. «Էրչիսեյ լեռը իր վեհությամբ չի զիջում թուրք ազգին, բայց մենք եկել ու հասել ենք այստեղ՝ Թեքիրի բարձրավանդակ, որը ծովի մակերևույթից 2150 մետր բարձրության վրա է: Մեր նպատակն է նույն ձևով գրավել մնացած ամբողջ աշխարհը»:

«Գորշ գայլերն» ունեն ակնհայտ հակահայ տրամադրություններ: Թյուրքեշը նույնիսկ ասել էր, որ Քրդական բանվորական կուսակցության՝ PKK-ի ղեկավար Օջալանը քուրդ չէ, հայ է, և իսկական անունն էլ Ակոփ Արթինյան է՝ փորձելով PKK-ին տալ հայկական բնույթ:

«Ջումհյուրիյեթն» իր 1993 թ. հուլիսի 11-ի համարում հրապարակել է հոդված PKK-ի դեմ «հոգեբանական շարժում» նախաձեռնելու նպատակով վարչապետ Չիլլերի նախագահությամբ ստեղծված պետական քարոզչական հանձնախմբի մասին, որը PKK-ի դեմ կանոնավոր տեղեկություն պիտի տար Թուրքիայի քաղաքական շրջանակներին: Հանձնախումբը, ըստ նշված աղբյուրի, լուսանկարների և այլ տեղեկությունների միջոցով նպատակ ուներ ճշտել PKK-ի շարքայիններին և հարցեր ուղղել նրանց, թե գիտե՞ն արդյոք նրանք, որ Աբդուլլահ Օջալանը հայերի ձեռքին գործիք է դարձել և այլն: « PKK-ականների համար հստակ է դառնալու կազմակերպության մեջ գործող ահաբեկիչների հայկական ծագումը»:

«Գորշ գայլեր» աշխատության հեղինակներն ասում են, որ Թուրքիայում PKK-ն հաճախ ներկայացվում է որպես «հայ ստրուկներից» բաղկացած կառույց: Գուցե սրանով թուրքերը ցանկացել են մի գնդակով 2 նապաստակ սպանել. այսինքն՝ քրդերին լարելով հայերի դեմ՝ ազատվել 2-ից էլ:

Աջակողմյան «Մեյդան» թերթը չի խորշել նույնիսկ այս մասին եզրակացնել: «Թուրքիայում,- հայտարարում է,- Քրդական հարց գոյություն չունի, կա միայն Հայկական հարց»:

Օջալանի հայկական ծագման մասին ակնարկվել է նաև 2000 թ. ՄԱԿ-ի առանձին զեկուցագրում:

Թուրքական մի շարք աղբյուրներ, առևտրական շրջանակներում հայտնի Բեհչեթ Ջանթուրքին ներկայացնելով որպես PKK-ի նյութական գործերի և հայ ահաբեկչական խմբերի հետ կապերի պատասխանատու, շեշտում են, որ նա «ծնվել է 1950 թ. Դիարբեքիրում, քուրդ հորից ու հայ մորից»:

Մյուս փաստը վերաբերում է PKK-ի նախագահական խորհրդի անդամ Նուրիե Գեսպիրի և դրա Կենտրոնական կոմիտեի անդամներ Բեքիր Բաքրճյանի և Մուսա Հաջըևի հայկական ծագմանը, որն առաջինը բացահայտել է «Թուրքիե» օրաթերթը 2002 թ. նոյեմբերին:

Ազդեցիկ «Միլլիեթ» թերթում Թուրքիայի ռազմական արտակարգ դրության կառավարիչ Յունիլ Էրքանը հայտարարել է. «Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագմամբ 800 PKK անդամներ»: Որոշ աղբյուրների համաձայն՝ PKK զինված անդամների թիվը շուրջ 5.500 է, ինչը համապատասխանում է Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար, գեներալ

Թագմայի հայտնած տեսակետին: Նա մամուլին տված մի հարցազրույցում պնդում էր, որ «PKK ամեն 7-րդ անդամ հայ է: PKK այդ անդամները զավակներն են այն հայերի, ովքեր Օսմանյան կայսրությանը կռնակից դաշնակցեցին 1-ին աշխարհամարտի ընթացքում»: Նույն գեներալ Թագման 1995 թ. մի այլ առիթով ևս հայտնում է. որ տեղի ունեցած ծանր մարտերի ընթացքում քրդեր չկային: «Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդյունքում նահանջեցին դեպի լեռները, հայեր էին»:

Ներկայիս Եվրոպայում հաստատված մի քանի «ծպտյալ» հայերի հետ առանձին հարցազրույցներից պարզվում է, թե ինչպես նրանցից ոմանք աշխատել ու պայքարել են PKK շարքերում և Օջալանի գերեվարությունից հետո հիասթափվելով՝ որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Հոլանդիա, Գերմանիա և այլն:

PKK էլեկտրոնային տեղեկատուներից մեկում կարդում ենք հայաբնակ Սայլակկայա (Զբին) պատմական գյուղում 1970 թ. ծնված հայ երիտասարդ Հուսեյնի մասին, որը զոհվել է Թուրքիայի բանակի դեմ մարտերում 1988 թ.:

Թուրքիայի ծայրահեղ ձախ հոսանքներից մեկի՝ TIKKO կազմակերպության համացանցային էջում կարելի է հանդիպել 1946 թ. Ամասիայում ծնված Կարպիս Ալթինցոլուի անվանը, կենսագրականին և նրա քաղաքական-տեսական հոդվածներին, ընդ որում՝ հաճախ է հիշատակվում նրա հայ լինելը: TIKKO կազմակերպության զոհվածների ցանկում հանդիպում ենք 3 հայ երիտասարդների կենսագրականներին:

Գիտենք՝ ASALA-ն համագործակցել է PKK-ի հետ, սակայն հայ-քրդական համագործակցությունը իրեն ցույց է տվել դեռևս 1920-ականների ավարտին, երբ պայթեց Արարատյան ապստամբությունը՝ սասանելով քեմալական Թուրքիայի հիմքերը: Շեյխ Սայիդ փաշայի 1925 թ. գլխավորած ընդվզման իներցիայով ընթացող այդ նոր ապստամբության 3 գլխավոր ղեկավարներն էին Իբրահիմ Հրսգե Թելի Փաշան, Իհսան Նուրի փաշան և Զիլան բեյը (վերջինս Խնուսի Հարամիկ գյուղի բնակիչ Արտաշես Մուրադյանն էր):

Արարատյան ապստամբության կազմակերպման գործում հայ-քրդական համագործակցությունը Թուրքիայի իշխանությունների աչքից չէր վրիպում: Ինչպես Սայիդ փաշայի ապստամբության, այնպես էլ Հոյբունական այս շարժման մղիչ ուժն ու շունչ տվող ոգին, թուրք իշխանությունների համոզմամբ, հայությունն էր՝ իր վերապրող զանգվածներով:

1994 թ. վերջերին «Ուլքյու Օջաքլարը»-ն Ստամբուլում մի թռուցիկ տարածեց հայ բնակչության հասցեին հետևյալ բովանդակությամբ. «Դուք՝ ծրիակերներդ, որ ձեզ այս երկրի քաղաքացի եք կարծում, դուք և մնացած բոլոր հայերդ, դարեր՝շարունակ շահագործել եք մեր երկիրը: Այսքանից հետո դուք դեռ չեք սովորել ձեր դասը: Դուք տակավին շարունակում եք վարվել այնպես, ինչպես անցյալում: Օսմանցիների ժամանակից սկսած՝ դուք մեզ շահագործել եք ու արյան հեղեղներ հոսեցրել. այդ բոլորի դիմաց մենք՝ թուրքերս, ձեզ հետ միշտ մեր հանրահայտ բարյացակամությամբ ենք վերաբերվել: Այո՛, այս բոլորի դիմաց մինչև հիմա աչք ենք փակել, սակայն դուք արդեն չափն ու սահմանը անցել եք: Մեր

համբերության բաժակը լցվել է: Իսկ թե ինչ է պատահել, հիմա մենք ձեզ կբացատրենք: Ղարաբաղում, Լաչինում, Շուշիում, Զանգելանում և շատ ուրիշ վայրերում, որոնց անունը չենք տալիս, դուք հազարներով սպանել եք մեր թուրք եղբայրներին: Եվ հետո մեզ հետ միասին նստում եք մի սեղանի շուրջ, կարծես թե ոչինչ չի պատահել, իսկ միաժամանակ օգնում եք մեր բնաջնջմանը: Այսպես դուք վարվել եք շատ երկար ժամանակ, բայց այժմ դրան վերջ պիտի դրվի: Այն, որ դուք կարողացել եք ամենալավ դիրքը ձեռք բերել, եղել է շնորհիվ մեր բարեսրտության և, սակայն, դուք շարունակում եք ձեր հնամենի դավադիր վերաբերմունքը մեր հայրենիքի հանդեպ: Ինչու՞ մենք պետք է արժանի լինենք այսպիսի վերաբերմունքի: Այսպիսի բան ո՞վ կարող է անել մի ժողովրդի հանդեպ, ինչպիսին մերն է: Այն ժամանակները, երբ կարելի էր թուրք անվան և ինքնության հետ խաղալ, անցել են: Անցյալի ու ներկայի բոլոր բաց մնացած հաշիվները մենք ձեզ հետ մաքրելու ենք: Թուրքիան պատկանում է միայն թուրքերին. դա ձեր ականջներին օ՛ղ արեք: Մեր Բաշբուղի օրինակով մենք ոտքի ենք ելել, որ ազատագրենք Թուրքիան շահագործումից: Եթե չեք ուզում, որ ձեզ քշենք, թափենք Երևան, լավ կանեք, որ հնարավորինս շուտ կորչեք ու հեռանաք այստեղից: Քանզի այնպես, ինչպես մեր հարգելի վարչապետն է ասել, այս գործը, մենք ինչ կերպ էլ լինի, գլուխ կբերենք: Կարևոր չէ՝ ինչ ձևով: Սա մեր վերջին զգուշացումն է: Թուրքիան պատկանում է միմիայն թուրքերին և ոչ թե ձեզ նման իժերի: Չհամարձակվե՛ք մոռանալ դա»:

1980 թ. Թուրքիայում ռազմական հեղաշրջման կազմակերպիչների կողմից որպես հեղաշրջման անհրաժեշ-

տության հիմնավորում նշվում են քրդական անջատողականությունը, երկրի սոցիալական ճգնաժամը, մասնավոր սեկտորի անհանգստության գործոնը՝ կապված ձախակողմյան շարժման ակտիվացման հետ, իշխող կառավարության ճգնաժամը և նրա կողմից իրավիճակի անվերահսկելիությունը:

1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին Թուրքիայում կային շրջաններ, գյուղեր, քաղաքներում՝ թաղամասեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակի գտնվում էին կա՛մ աջ, կա՛մ ձախ ծայրահեղականների վերահսկողության ներքո: Նրանց միջև ընթացող պայքարը կարելի է բնութագրել որպես չհայտարարված քաղաքացիական պատերազմ: Թուրք հետազոտող Հաքան Յավուզը MHP-ի վարած քաղաքականությունը բնորոշում էր «վախի քաղաքականություն» արտահայտությամբ:

Ահաբեկչության ալիքի ընդլայնումը հնարավոր եղավ կանխել միայն ռազմական հեղաշրջման միջոցով:

1970-ական թթ. Թուրքիայում իսլամական շարժումը ներկայացնողն էր Ազգային փրկության կուսակցությունը (ԱՓԿ), որը դեռևս շարունակում էր մնալ հզոր ուժ Թուրքիայում:

Թուրքական բանակի վերնախավին, իսկ Իրանում իսլամական հեղափոխությունից հետո՝ Թուրքիայի դաշնակիցներին ևս անհանգստացնում էր իսլամիստների գործունեությունը: Թուրքիայում մտավախություն կար Իրանում իսլամական հեղափոխության արտահանման շուրջ:

Թուրքիայում ռազմական ուսումնարանի կուրսանտը՝ ապագա սպան, իր ուսման առաջին իսկ օրերից

դաստիարակվում է քեմալիզմի սկզբունքների ոգով, որոնցից հատկապես կարևորվում է աշխարհիկության (լայիցիզմ) սկզբունքը և ամեն տեսակի ոտնձգություններ լայիցիզմի հանդեպ անընդունելի է զինվորականության համար: Իսկ այդպիսիք շատ են ԱՓԿ-ի գործողությունների մեջ՝ երբեմն հասնելով նույնիսկ խալիֆաթի վերականգնման և շարիաթի հաստատման անհրաժեշտության հայտարարությունների:

Այսպիսով՝ մինչև 1973 թ. խորհրդարանական ընտրությունները վերջնականապես ձևավորվեցին «Գորշ գայլերի» գաղափարախոսական և քաղաքական ուղղությունները: 1973 թ. խորհրդարանական ընտրություններում MHP-ն ստացավ քվեների 3,38 տոկոսը (3 պատգամավորական մանդատ), ինչը կարծես չնչին արդյունք էր:

«Գորշ գայլերի» ճակատագիրը կտրուկ փոխվեց 1970-ական թթ. կեսերից, երբ MHP-ն 1975 թ. «Ազգայնական ճակատ» իշխող կոալիցիայի մաս կազմեց, և Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում՝ Ա. Թյուրքեշը առավելագույնս օգտագործեց իշխանական լծակները իր կուսակցության հզորացման համար: Թյուրքեշը հատկապես խթանում էր «Գորշ գայլերի»՝ ուժային կառույցներ ներթափանցման գործընթացը. «Գորշ գայլերը» մեծ թվով ներթափանցեցին ոստիկանություն, բանակ, MIT: Արդեն 1970-ական թթ. կեսերից MIT-ի մի քանի վարչություններ գտնվում էին Թյուրքեշի վերահսկողության տակ: Վերջնականապես ձևավորվեցին «Գորշ գայլերի» գրոհային ջոկատները: Նրանք ապահովվեցին զինամթերքով, որի զգալի մասը ձեռք էր բերվում Կիպրոսի

հյուսիսային հատվածից:

1977 թ. MHP–ի կողմից ստեղծվեց MISK-ը (Miliyetci Isci Sendikalary)-Ազգայնական աշխատավորական արհմիությունների համադաշնությունը, որը խոշորագույն ձախակողմյան՝ արհմիությունների համադաշնություն էր, որպես հակակշիռ DISK-ի (Devrimci Isci Sendikalary Konfederasyonu-Հեղափոխական աշխատավորական արհմիությունների համադաշնություն): 1970 թթ. վերջերին MISK-ն իր կազմում ուներ 65 000 աշխատավոր:

1977 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում MHP-ն ստացավ 16 պատգամավորական մանդատ:

1977 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ԹԱՄԺ-ն անվստահություն հայտնեց կառավարությանը, և «Ազգայնական ճակատ» կոալիցիոն կառավարությունը դադարեցրեց իր գործունեությունը:

«Գորշ գայլերն» անցան նոր մարտավարության:

Այս ժամանակաշրջանում «գորշ գայլերն» սկսեցին անմիջականորեն պայքար մղել իշխանությունը զավթելու համար: Դեռ 1977 թ. հունիսի սկզբին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըկ Քեմալ Էրսինը և ծայրահեղ ուղղվածության մոտ 200 սպաներ: Էրսինի ձախողված հեղաշրջման նախաձեռնողն էր Ա. Թյուրքեշը: Դավադրության տապալումը, սակայն, չընկճեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու նկրտումները, ավելին, 1978 թ. սկսած, Թյուրքեշն այդ գործընթացի մեջ ներգրավեց «կոմանդոսներին»՝ ներքաշելով այդ պայքարի մեջ իր

վերահսկողության տակ գտնվող գրոհային ջոկատներին:

1978 թ. հունվարին էջևիթի կառավարության կազմավորումից հետո «Գորշ գայլերի» շարժումը ձեռք բերեց նոր որակ: «Գորշ գայլերն» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային՝ նպատակ հետապնդելով ապակայունացնել երկրի ներքին դրությունը, ինչը թուլացնում էր էջևիթի կառավարությունը և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծում իշխանությունը զավթելու համար: Այդ է վկայում 1978 թ. մարտի 16-ին Ստամբուլի համալսարանի դիմաց՝ Բայազետի հրապարակում, կազմակերպած ահաբեկչական ակտը, ուր զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող: Պայթյունն իրականացրած Զուլքուֆ Իսոթը խոստովանել է, որ ահաբեկչության հրամանը տվել էր Բաշբուղը, իսկ գործողությունը կազմակերպելու գործում նրան օգնել էին ոստիկանության որոշ աշխատակիցներ: Դեպքից կարճ ժամանակ անց Իսոթը, զղջալով իր արարքի համար, փորձում է հանձնվել իրավապահ մարմիններին, ինչի համար և սպանվում է իր «գաղափարապաշտ» ընկերների կողմից: Սույն օրինակը հստակ ցույց է տալիս, որ շատ երիտասարդներ, չգիտակցելով հնարավոր հետևանքները, մտնում էին այդ ահաբեկչական կազմակերպության մեջ և այլևս չէին կարողանում դուրս գալ այնտեղից. «Գորշ գայլերի» համար ետդարձի ճանապարհ չկար: Այդ են վկայում Թյուրքեշի հայտնի խոսքերը. **«Խփե՛ք, սպանե՛ք բոլոր նրանց, ովքեր պայքարել են մեր նպատակի համար և հիմա երես են թեքում»:** Սպանեցին նաև դասախոսներ Օրհան Յավու-

զին, Յումիթ Քաթանջըօղլուին, հասարակական ու քաղաքական գործիչների, այդ թվում՝ նաև Բալգաթի արյունալի դեպքերը (4 մարդ սպանվեց), " Milliyet" թերթի գլխավոր խմբագիր Ա. Իփեքչիին (Ալի Աքչայի կողմից), «ԴԻՍԿ»-ի նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլերին: Այդ գործողությունների գագաթնակետն էին Քահրամանմարաշի դեպքերը:

1978 թ. դեկտեմբերին, երբ կինոթատրոններից մեկում, որտեղ ցուցադրվում էր «Ե՞րբ կծագի արևը» (Gunes ne zaman dogacak?) հակակոմունիստական ֆիլմը, պայթյուն կազմակերպեցին: Պայթյունի համար մեղադրեցին ալևիներին, որի հետևանքով բախումներ սկսվեցին ալևի և սուննի բնակչության միջև (զոհվեց 100, վիրավորվեց 1000-ից ավելի մարդ), դրանից հետո երկրի 13 շրջաններում ռազմական դրություն մտցվեց, ինչը և Քահրամանմարաշի պայթյունի հեղինակների գլխավոր նպատակն էր. ցույց տալ կառավարության՝ իրավիճակի վերահսկելիության անկարողությունը:

Ենթադրաբար «Գորշ գայլերի» ձեռքով միայն 1977-80 թթ. թվով 3 ռմբային հարձակումներ են իրագործվել Կ. Պոլսո պատրիարքարանի դեմ:

Զինվորականության՝ իշխանության գլուխ անցնելուց հետո 4 գլխավոր կուսակցություններից ամենածանր պատժամիջոցներն իրականացվեցին «Գորշ գայլերի» նկատմամբ: Ըստ փաստաթղթերի՝ MHP-ն դավադրություն էր կազմակերպում՝ նպատակ ունենալով երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատել:

Այսպիսով՝ վերլուծելով «Գորշ գայլերի» գործունեության հիմնական փուլերը 1960-70-ական թթ., կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակա-

հատվածում «գորշ գայլերը» իշխանությունը զավթելու նպատակաուղղված քաղաքականություն էին իրականացնում՝ երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու և իրենց պանթյուրքիստական քաղաքականությունն իրագործելու նկրտումներով: Սակայն 1980 թ. զինվորական հեղաշրջումը հերթական անգամ տապալեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու դավադիր ծրագրերը:

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման կազմակերպողները շատերին ձերբակալեցին: Բայց Ա. Թյուրքեշը, օգտագործելով իր հին կապերը ռազմական ղեկավարության շրջանում, իմացավ նախօրոք պատրաստված հեղաշրջման մասին, թաքնվեց ու, խուսափելով ձերբակալումից, օգտագործեց այդ ժամանակը MHP-ի կառուցվածքը վերափոխելու համար, վերադասավորեց կուսակցությունը, որից հետո ինքնակամ հանձնվեց ռազմական իշխանություններին: Ռազմական իշխանությունը «ուշադրություն ցուցաբերեց» 650 հազար մարդու նկատմամբ (այսինքն՝ բնակչության ամեն 10-երորդին): MHP-ի ու Ulku Ocaklary-ի «գործով» անցնում էր 587 մարդ: 1981 թ. դատախազը պահանջեց 200 «գորշ գայլերի» ու Թուրքեշի համար մահապատիժ: Քեմալիզմը հռչակվեց Թուրքիայի Հանրապետության պաշտոնական գաղափարախոսություն:

MHP-ի նախկին փոխնախագահ Ռըզա Մյուֆթուօղլուն իր՝ 2000 թ. հրատարակած «Մահակների զինվորները» (Coplarin Askerleri) գրքում նշում է , որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից առաջ բանակում մի քանի խմբավորում կար, որոնցից մեկը գտնվում էր Ա. Թյուրքեշի ազդեցության ներքո: Թյուրքեշն այդ խմբավորման

միջոցով, որը ղեկավարում էր գեներալ գնդապետ Սուաթ Իբրահիմը, ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում՝ երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով: Եթե ավելացնենք նաև այն, որ «գորշ գայլերը» 1970-ական թթ. վերջին կարճ ժամանակաշրջանում կարող էին մոբիլիզացնել մոտ 200 000 զինված համակիրների, կարելի է եզրակացնել, որ իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում Թյուրքեշն իշխանությունը զավթելու իրական հնարավորություն կունենար: Զինվորական հերթական միջամտությունը Թուրքիայի քաղաքական անցուդարձին խափանեց Թյուրքեշի ծրագրերը:

1980 թ. սեպտեմբերի 12-ին թուրքական բանակի ղեկավարությունը Գլխավոր սպայակույտի պետ գեներալ Ք. Էվրենի գլխավորությամբ երկրում ռազմական հեղաշրջում իրականացրեց: Ժամանակավորապես արգելվեցին բոլոր կուսակցությունների գործունեությունները: «Գորշ գայլերը» փորձել էին սպանել Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, Գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենին: Սպանությունից հետո Էվրենի փոխարեն ԱԱԽ-ի նախագահ էր դառնալու ցամաքային զորքերի հրամանատար Ն. Էրսինը:

Շուտով հայտնի դարձավ ԱԱԽ-ին «Գորշ գայլերի» նախապատրաստած մահափորձի մասին և հնարավոր եղավ այն կանխել: Թեև 1980 թ. Ք. Էվրենի ռազմական հեղաշրջումը մեծ հարված հասցրեց «Գորշ գայլերի» շարժմանը, այնուամենայնիվ, այն վերջնական և մահացու չէր: Հեղաշրջման հեղինակները ամենևին էլ չէին ցանկանում ամբողջովին ջախջախել «Գորշ գայլերի» շարժումը (ինչը տեղի ունեցավ ծախակողմյան շարժման հետ), և երբ «Գորշ գայլերը» դադարեց վտանգ ներկայացնել զինվորականների իշխանության համար, սկսեցին օգտագործել նրանց PKK-ի և ԱՍԱԼԱ-ի դեմ «սև աշխատանք» կատարելու համար:

1983-85 թթ. MHP-ն ներկայացնում էր «Պահպանողական կուսակցությունը», որը հիմնվել էր 1983 թ հուլիսի 7-ին Մեհմեթ Փամաքի ղեկավարությամբ: 1983-85 թթ. մի ժամանակաշրջան էր, երբ «գորշ գայլերը» մաքառում էին կուսակցության պահպանման համար: Մ. Փամաքը զբաղեցրել է ՊԿ-ի ղեկավարի պաշտոնը ընդամենը 3 շաբաթ: Մեհմեթ Փամաքը, մասնավորապես փորձելով ստեղծել ոչ միայն «պանթուրքիստական», այլև ավելի լայն ընդգրկումով կուսակցություն, փորձեց ստեղծել իսլամիստական-ազգայնական հոսանք, հանդիպեց իսլամիստներին, այդ թվում՝ նաև «Սուլեյմանիե» միաբանության ներկայացուցիչների հետ, սակայն դա նրան չհաջողվեց: Նա եղել է ուժեղ ու կազմակերպչական ունակություններով օժտված քաղաքական գործիչ: «Պահպանողական կուսակցությունը» 1-ին հերթին ուշադրություն էր դարձնում ազգայնականությանը. այդ մասին է վկայում այն փաստը, որ կուսակցության անուն է առաջարկվում «Ազգային նպատակի կուսակցություն» անվանումը (Millet Hedef Partisi), 2-րդ պլան էր մղվում իսլամը: Պահպանողական կուսակցության պանթուրքիստական լինելը հիմնավորվում է Մեհմեթ Փամաքի ելույթում տեղ գտած մի արտահայտությամբ՝ «Թուրքերեն լեզուն, Թուրքիայի պաշտոնական լեզուն լինելով հանդերձ, լեզուն է ողջ թյուրքական աշխարհի»: Հետագայում Փամաքն անցավ իսլամիստական ֆունդամենտալիստների ճամբար: Եղել է Թուրքիայի

իրավապաշտպան մուսուլմանական «Mazlumder» կազմակերպության հիմնադիրն ու 1-ին նախագահը: Նա 32 տարեկան էր, ավարտել էր Անկարայի համալսարանի քաղաքագիտության հայտնի ֆակուլտետը, որը Քեմալական Թուրքիայի՝ պետական պաշտոնյաների կադրեր պատրաստելու հիմնական դարբնոցն էր: Իրականում, սակայն, Փամաքը «Ulkucu» էր՝ «գաղափարապաշտ», սակայն այդ մասին խոստովանում էր միայն յուրայիններին: Այդ փաստի մասին չգիտեին շատերը, քանի որ նա «գաղտնի» անդամներից էր, որոնց մասին չգիտեին ոստիկանությունում, և որի շնորհիվ կարողացել էր լավ կարիերա անել:

Փամաքը հանդիպեց ծերբակալված Թյուրքեշին և ստացավ հրահանգներ: Նա պետք է Թյուրքեշի առաջարկով «վերստեղծեր» MHP-ն: Բայց Փամաքը կարճ ղեկավարեց կուսակցությունը, որն իրականում նույն «Գորշ գայլեր» կուսակցությունն էր:

1984 թ դեկտեմբերին ՊԿ-ի նախագահ ընտրվեց իրավաբան Ալի Քոչը. նա 35 տարեկան էր և հայտնի էր որպես Թյուրքեշին նվիրված «գորշ գայլ»: Ա. Քոչը ծնվել է 1950 թ., Կոնիայի վիլայեթի Բոզքըր Իլչեում: Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել է Կոնիա քաղաքում: Ավարտել է Անկարայի համալսարանի իրավունքի ֆակուլտետը և նշանակվել Թուրքիայի վարչական միավորի (ilce, kaza) ղեկավար (Kaymakam): Ֆաշիստական երիտասարդության մեջ հայտնի էր «Bozkurt Ali» (Գորշ գայլ Ալի) անունով: 1984 թ. դեկտեմբերի 2-ից Պահպանողական կուսակցության ղեկավարն էր: Պահպանողական կուսակցությունը (Muhafazakar Partisi) գործեց միայն 2 տարի ու հիմք ծառայեց MHP-ի վերածննդի

համար:

Բաշբուղ Թյուրքեշը մահացավ 1997 թ. ապրիլի 7-ին: Ցավակցություններ հայտնեցին ողջ թուրքական աշխարհից: «Turkiye» թերթում հայտնվում են ամբողջական էջերով ցավակցական ծանուցումներ Եվրոպայի թուրքական կազմակերպությունների կողմից: TRT int. թուրքական պետական հեռուստակայանը, որը հնարավոր է կաբելային գծով ընդունել Հոլանդիայում, ուղիղ եթերով հեռարձակում է հուղարկավորության արարողությունը: Թանսու Չիլլերը «Արդար ուղի» (Adalet Yolu) կուսակցության կողմից հրապարակավ ցավակցություն է հայտնում: Նույնն է անում «Մայր հայրենիք» (ANAV) կուսակցության կողմից Մեսութ Յըլմազը: Սա արդեն ակնհայտորեն պետական կարգի հուղարկավորություն է: Ո՞վ պետք է գրավի Բաշբուղի տեղը:

1997 թ. մայիսի 18-ին Անկարայում տեղի է ունենում MHP-ի համագումարը: Թեկնածուներն են Թյուրքեշի տղա Թուղրուլ Թյուրքեշը, Դալեթ Բահչելին, էնիս Օքսուզը, Ռամիզ Օնգյունը, Մուհարրեմ Շեմսեքը և Իբրահիմ Չիֆթչին: Այս վերջին 3-ը հանում են իրենց թեկնածությունը հօգուտ Բահչելիի: Թուղրուլի հետևորդները այլևս չեն կարողանում զսպել իրենց: Սկսվում է ծեծ ու ջարդ, կրակում են օդում: Իրավիճակը հանդարտեցնելու համար Անկարա է գալիս Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի նոր նախագահ Մեհմեթ Էրդողանը: Հուլիսի 6-ին, երբ վերստին տեղի է ունենում համագումար, մասնակիցներն իրենց հանգիստ են պահում: Նույնիսկ Թուղրուլ Թուրքեշը շնորհավորում է Բահչելիին:

Կուսակցության նոր նախագահ Բահչելին ծնվել է 1948 թվականին, Օսմանիա նահանգում և պատանի հա-

սակից հարել է Ուլքյուջու գաղափարներին: (irevan-az.com) Հավանականություն կա, որ Թուրքիայի նախկին վարչապետ Մեսութ Յըլմազն էլ համշենահայ է եղել: Ասեկոսեներ կային, որ MHP նախագահ Դևլեթ Բահչելին էլ հայ է, բայց վերջինս դրանց առաջն առնելու համար պատվիրել էր տեղեկություն գրել իր տոհմի մասին, և արդյունքում նա ապացուցել էր իր թուրքմեն լինելը):

1967 թ. նա է հիմնադրել MHP-ի երիտասարդական բաժինը՝ «Ուլքյու Օջաքլարը»-ն, որ նշանակում է գաղափարապաշտական օջախներ: Ավելի ուշ սկսել է դասավանդել հասարակական գիտություններ Ղազի համալսարանում: 1987 թ. թողել է համալսարանի իր պաշտոնը՝ իրեն լիովին նվիրելով կուսակցության գործին:

Թուղրուլ Թյուրքեշը համագումարին հաջորդած մամուլի ասուլիսում ասել էր. «Քաղաքականությունը մի երկար ճանապարհ է, չպետք է շուտ մի կողմ քաշվել»: Նա կսպասի մինչև կայանալիք հաջորդ ընտրությունները, որ տեղի կունենան հաջորդ համագումարում՝ հոկտեմ-

բերին, երբ իրեն կրկին թեկնածու կհայտարարի:

Ըստ ՀՅԴ «Դրոշակ» ամսաթերթի՝ «Գորշ գայլեր» խմբակցությունը անցյալում մաս է կազմել ՆԱՏՕ-ի «Գլադիո» ցանցին: «Գորշ գայլերի» կազմավորմանը և հզորացմանը նպաստեցին արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: Կան տեղեկություններ, որ 1960-ական թթ. ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) կողմից ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ստեղծվեցին «կոնտրգերիլիաների» (Counter Guerriila-հակապարտիզանական) գաղտնի կազմակերպությունները, որոնց գլխավոր նպատակն էր հակապարտիզանական պայքար մղել ձախակողմյան շարժումների դեմ և ամեն գնով խոչընդոտել դրանց զարգացմանը: Թուրքիայում «կոնտրգերիլիաների» գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը (այսուհետ՝ ՀՊԲ Ozel Harp Dairesi), որը գաղտնի կառույց էր և գործում էր սկզբում ՄԻԹ-ի (Milli Istibaharat Teskilati-Ազգային հետախուզության կազմակերպություն), իսկ հետագայում՝ Գլխավոր շտաբի ենթակայության տակ: Ընդհանուր թշնամու գործոնը, ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի էր դարձնում «Գորշ գայլերի» և ՀՊԲ-ի համագործակցությունը:

Ըստ ռուսալեզու վեբ-կայքերից մեկի՝ «գորշ գայլ» էր նաև Աբդուլլաի Չեթինը, որի՝ «Milliyet» թերթին 1997 թ. ապրիլի 11-14-ին տված հայտարարության մեջ նշվում է, որ մասնակից է եղել այն խմբակցությանը, որը մահափորձեր էր կատարել Էդուարդ Շևարդնաձեի ու Հեյդար Ալիևի դեմ:

«Գորշ գայլերն» էին իրականացրել նաև 1981 թ. մա-

յիսին Հռոմի պապ Պողոս Երկրորդի դեմ կատարված մահափորձը, որի իրականացնող Մեհմեթ Ալի Աքչան ծանր վիրավորել էր Պողոս Երկրորդին, ապա ձերբակալվել, բանտարկվել, ներում հայցել Հռոմի պապից, որն էլ տեսակցել էր նրան: Չնայած դրան, 1997 թ. հունիսի 9-ին «Գորշ գայլերի» երկու համակիրներ գրավել էին մալթայական պետական ավիաուղուն պատկանող «Բոինգ-737»-ը՝ իր 80 ուղևորներով ու պահանջել էին ազատել Աքչային: Այժմ Ալի Աքչան ազատ է արձակված:

Ըստ Թուրքիայի Աշխատանքային կուսակցության ղեկավար Դողու Փերինչեկի, որն ասում են հայ է, Չաթլին և այլ «գորշ գայլեր» վաղուց ի վեր աշխատում են Թուրքիայի իշխող վերնախավի համար: Գիտենք՝ եվրոպական երկրներում ու ԱՄՆ-ում սկսվել էին թուրք դիվանագետների տարօրինակ սպանություններ, որի իրականացնողն էր բոլորիս հայտնի «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը», որն ավելի շատ հայտնի է «ASALA» անվամբ: Այժմ Թուրքիայում խոսվում է, թե իբր MIT-ի մարդիկ, այսինքն՝ Թուրքիայի Պետական ազգային անվտանգության ապարատից, հանձնարարել էին Չաթլիին լուծել այդ խնդիրը, իսկ որոշ ժամանակ անց, իբր դրա հետևանքով, տարօրինակ սպանությունները դադարել էին: Ֆրանսիայում հանելուկային հանգամանքներում սպանվել էր ԱՍԱԼԱ-ի լիդերներից մեկը: Ըստ վերոնշյալ Փիրենչեկի պնդման՝ «գորշ գայլերին» անձամբ ղեկավարում էր տիկին Թանսու Չիլլերը: 1968 թ. «Գորշ գայլեր» խմբակցությանը միացան երկու այլ դիվերսիոն-ռազմական կուսակցություններ՝ Մեծ իդեալիստական միությունն ու Թուրքական դեմոկրատական իդեալիստական միության համադաշնությունը:

«Գորշ գայլերի» թիվը 1970-ական թվականներին հասնում էր 300 հազարի: 1974-80 թթ. վերացվեցին «Գորշ գայլերի» հակառակորդ 700 քաղաքական ու մտավորական գործիչներ: Պատկերն ամբողջացնելու համար բերենք մի քանի վիճակագրական տվյալներ. 1978 թ. Թուրքիայում ահաբեկչության զոհ է դարձել 879, 1979 թ.՝ մոտ 1200, իսկ 1980 թ. առաջին 8 ամիսների ընթացքում (մինչև սեպտեմբերի 12-ը)՝ ավելի քան 2000 մարդ:

«Գորշ գայլերը» Թուրքիայից դուրս շարժվում են հետևյալ կարգախոսով՝ «Ավելի լավ է ունենաս 1 ատրճանակ, քան՝ 10 եղբայր»: Ալփարսլան Թյուրքեշն անձամբ խրախուսում էր երիտասարդ «գաղափարապաշտներին»՝ զենք կրելու համար. «Երիտասարդները կարող են ատրճանակ ունենալ: Մենք զենք սիրող ազգ ենք: Մեզանից ո՞վ զենք չունի»:

Զբաղվում են թմրանյութի առևտրով, մարդկանց (ինչպես իրենց՝ «գորշ գայլերի», այնպես էլ այլ) առևանգումով, բանտերից փախցնելով: Թուրքիայի MHP-ն ողջ Եվրոպայի «գորշ գայլերի» մայր կուսակցությունն է: Իրենց մաֆիոզ ղեկավարներին անվանում են «Բաբա»-ներ: Փորձում են մտնել տեղական պետական մարմինների մեջ, այդ թվում նաև ոստիկանություն՝ իրենց մարդկանց օգնելու, հասարակական դիրք գրավելու համար, քանի որ համազգեստ նշանակում է նախևառաջ հասարակական ստատուս:

Նրանց գործունեությունն ուղղված է հրեաների, հայերի, հույների, քրդերի և հատկապես՝ կոմունիստների դեմ: Ինչպես հենց իրենք՝ «գորշ գայլերն» են վկայում, իրենք բարգավաճում են շնորհիվ որևէ թշնամու գոյութ-

յան: Մինչև 80-ականների կեսերը MHP-ի պայքարը կոմունիստների դեմ էր: Ըստ նրանցից մեկի՝ «Միակ բանը, որ մենք անում էինք, ձախերին հարվածելն էր: 1980 թ. պետական հեղաշրջումից հետո ձախերի համար լավ ժամանակներն անցել էին: Նրանց տեղը, սակայն, բռնեց PKK-ն (Partiye Kargerane Kurdistan) և նրա առաջնորդ Օջալանը, որին քրդերն անվանում են Ապո: Առանց նրա «Գորշ գայլերի» շարժումը երբեք ի վիճակի չէր լինի 80-ականներին այդպիսի մի զորեղ վերադարձ արձանագրել: Կառավարությունը պաշտպանում էր «Գորշ գայլերին» և է: Պատահական չէր, որ «Ozel Timler»-ը, որը թարգմանաբար նշանակում է՝ «Հատուկ ջոկատներ», մեծամասամբ կազմված էր գորշգայլականներից: Եվ նրանց տխրահռչակ գոյությունը բանակում համարվում էր «բնական»: Թուրքերի նպատակն է քրդերին սարքել փոքրամասնություն, ինչպես հայերին, հույներին և հրեաներին:

«Գորշ գայլերի» հավաքներից մեկի ժամանակ Անկարայի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Ալթընթաշն ասել է. «Արևմուտքում, երբ դեռ 19-րդ դարում սկսեցին զգուշորեն խոսել մարդու իրավունքների մասին, մեզ մոտ այն արդեն 14 դար է իրագործվում է Ղուրանի միջոցով: Վերցնենք, օրինակ, կանանց իրավունքները: Նախքան իսլամը կանանց կենդանի թաղում էին»:

Մի այլ ժողովում հռետորներից մեկն ասում է. «Յուրաքանչյուր մուսուլմանի պարտականությունն է, որ գյավուրներին՝ անհավատներին, մուսուլման դարձնի»: «Արևմուտքը վարում է միտումնավոր ասիմիլյացիայի քաղաքականություն: Նա պարտադրում է մեզ իր մշակույթն ու կրոնը»:

«Գորշ գայլերի» հավաքներում հաճախ լսվում են հայտնի թուրք երգիչ Օզան Արիֆի երգերը, որը չի թաքցնում իր համակրանքը նրանց նկատմամբ:

Թուրքիայում ամեն տարի անցկացվում են MHP-ի բանակումներ, որտեղ, ինչպես նշում է մասնակիցներից մեկը, «ստանում ես քաղաքական դաստիարակություն, սովորում, թե ինչպես պետք է պայքարես քրդերի դեմ, որոնք ուզում են մեր երկիրը երկու կտոր անել»:

«Գորշ գայլերն» իրենց շուրջ համախմբելու համար օգտագործում են սպորտը:

Ազգապաշտ թուրքը «Մի Գերմարդ» է, որը չի ընդունում այս աշխարհում երկու ազգի գոյություն»:

«Գորշ գայլերի» անցկացրած խաղաղ միջոցառումների ժամանակ նրանց միջից առանձնացվում են (գյորկլի) կարգապահներ և (բաշկան) հրաման տվողներ, որոնց հրամանները կատարում են գյորկլիները:

«Ուլքյուջուների» մոտ առանց նախագահի ներկայության կամ առանց նրա հրամանի ոչինչ չի սկսվում: Ունեն բարևելու իրենց հատուկ ձևերը: Ձեռքով բարևելու ձևը այսպես է. մեկը բռնում է մյուսի աջ ձեռքը և իր ճկույթը մտցնում մյուսի ճկույթի արանքը, ցուցամատը և միջնամատը ինքնաբերաբար ծգվում են առաջ, բթամատերը ցցվում են վեր, իսկ մատնեմատերը տակից պինդ պահում են ձեռքերը: Հաջորդ

բարևելու ձևում իդեալիստները, սակայն, որպես բարև, ճակատներն են շփում իրար՝ մեկ աջ, մեկ ձախ կողմից: Հաջորդ բարևը այսպես է:

Հանդիսություններից մեկի ժամանակ օգտագործել են «գորշ գայլերի» կողմից այնքան էլ չսիրված, բայց «լավ» ալևիներից մեկի՝ մտավորական, գրող Հաջի Բեկթաշ Վելիի բանաստեղծությունից մեկ տող. «Bir olalim, iri olalim, diri olalim» (Մե՛կ լինենք, մե՛ծ լինենք, ուժե՛ղ լինենք): «Գորշ գայլերի» կազմակերպած ահաբեկչությունը հիմնականում իրականացնում էին «Գաղափարապաշտները» (ulkucu): 1960-ական թթ. վերջերին Թյուրքեշի ազդեցության տակ գործել սկսած «Գաղափարապաշտների» (ulkuculer) կազմակերպությունները, չմտնելով MHP-ի կուսակցական համակարգի մեջ, սկսեցին ղեկավարվել ու վերահսկվել վերջինիս կողմից: «Գաղափարապաշտների» կազմակերպությունները մեծ մասամբ բաղկացած էին երիտասարդներից և հիմնականում զբաղված էին պանթյուրքական գաղափարախոսության քարոզչությամբ և տարածմամբ: «Գաղափարապաշտների» մեկնաբանությամբ՝ լինել «գաղափարապաշտ» նշանակում է «ամեն ինչ զոհաբերել հանուն գաղափարի՝ կատարելով ոչ թե այն, ինչ տրամաբանությունն է հուշում, այլ՝ այն, ինչ ղեկավարն է հրամայում», իսկ գլխավոր գաղափարը Մեծ Թուրան պետության գաղափարն էր: Նախապատրաստվող ահաբեկչական գործողության հրահանգը բանավոր կերպով ստացվում էր MHP-ի Ulku Ocak-ից, զենքը նախօրոք տրվում էր տեղական կազմակերպության ղեկավարների կողմից: Ահաբեկիչների կորիզը կազմում էին «կոմանդոս»-ների ճամբարներում պատրաստություն անցած

«գաղափարապաշտները»: 1960-ական թթ. ՀՊԲ-ի օժանդակությամբ ստեղծված «Գորշ գայլերի» ճամբարներում նրանց վարժեցնում էին որպես գրոհայինների: Այնտեղ նրանց վարժեցնում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես և թե՛ հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստությանը՝ նրանցում մանրամասն սերմանելով պանթուրքիստական գաղափարախոսություն: Այդ ճամբարների թիվը 1970-ական թթ. վերջերին 28-ն էր, որտեղ պատրաստություն էին անցել ավելի քան 1500 երիտասարդներ:

«Գորշ գայլերի» խորհրդանիշներից մեկն էլ 3 կիսալուսինն է, որը, ինչպես և Bozkurt բառը օգտագործելու բացառիկ իրավունքը պատկանում է միմիայն նրանց, որոնք, սակայն, ինչպես աստղը, դրոշի կարմիր գույնը ներկայացնում են այլոց՝ իբրև Օսմանյան կայսրության խորհրդանիշներ: Իրականում, սակայն, 3 կիսալուսինը նշանակում է «Աստված, հայրենիք, դրոշակ»: 3 կիսալուսինն՝ իր 9 ճառագայթներով հաստատվել էր MHP-ում դեռևս 1969 թ.: «Գորշ գայլերի» պարբերաթերթն է «Ulku ocak»-ը (Գաղափարապաշտական օջախ):

Մզկիթներից մեկում տարվում է բացահայտ քաղաքական քարոզչություն: Իմամ Աբդուլլահն ասում է. «Նրանք, ովքեր չեն երկրպագում մարգարեին, անասուն են: Նրանց ու անասունների միջև տարբերություն չկա, քանզի անասունն էլ ուտում, խմում, բազմանում է: Սիրելի՛ հավատացյալներ, խնդրում եմ ձեզ հեռու մնաք այն մարդկանցից, որոնք մեծ մարգարեին չեն երկրպագում»:

Կամ Ulu Cami-ի իմամը քարոզում է, որ մատաղ անե-

լու օրը (Kurban bayram), ավելի լավ կլինի փող նվիրաբերել Չեչնիայի իրենց «եղբայրներին», որոնք գտնվում են ծանր կացության մեջ: Սակայն, ինչպես հետագայում պարզվում է, փողը նույնիսկ չի հասել Չեչնիա, այլ բաժանվել է այլ թուրքական համայնքների միջև:

Թուրք երիտասարդությունը կլանվում է ոչ միայն «Գորշ գայլերի», այլև **«Milli Gorus»** (Միլլի Գյորուշ) կազմակերպության կողմից: Վերջինս թուրք-արմատական-իսլամական մի շարժում է Եվրոպայի տարածքում: Ըստ այս երկուսի տվյալների՝ նրանք ունեն համապատասխանաբար՝ 40.000 ու 32.000 համակիր Հոլանդիայում: Եթե դա իրոք այդպես է, ուրեմն թուրք փոքրամասնության 1/4-ը հարում է կա՛մ կրոնական-արմատական, կա՛մ ազգայնամոլական գաղափարներին:

Բացի նրանից, որ Եվրոպայի թուրքերը կարող են լուրջ լոբբիստական աշխատանքներ տանել Թուրքիայի համար, նրանք նաև տարեկան շուրջ 5 միլիարդ եվրո են փոխադրում Թուրքիա, որը նույնպես կարևոր է Թուրքիայի համար:

«Գորշ գայլերի» մրցակից են համարվում ANAF-ը («Avrupa Nizami-Alem Federasyonu» - Եվրոպայի «Համաշխարհային կարգ» ֆեդերացիա) ու Refah Parti-ն՝ Արմատական իսլամականների կուսակցությունը:

«Գորշ գայլերից» 1986 թվականին Գերմանիայի թուրքական ֆեդերացիայից (Թուրքիայից հետո «Գորշ գայլերի» ամենամեծ օջախն էր և է) դուրս է գալիս նախագահը՝ Մուսա Սերդար Չելեբին ու 1988 թ. հիմնում «Turk Islam Kultur Dernekleri Birligi»-ն (Թուրք իսլամական մշակութային կազմակերպությունների միավորում), որի համար ավելի առաջնահերթ էին իսլամական արժեքները:

1992 թ. Թուրքիայում MHP-ից հեռանում են մի խումբ մարդիկ ու հիմնում «Buyuk Birlik Partisi»-ն (Մեծ միավորման կուսակցություն):

Չելեբին հնարավոր է մասնակցություն է ունեցել Ալի Աքչայի միջոցով Հռոմի պապի մահափորձին: Այս գործի առնչությամբ Չելեբին Իտալիայում 3 տարի բանտ նստեց, մինչև որ փաստերի բացակայության պատճառով ազատ արձակվեց:

Թեև 2002 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում MHP-ն, ստանալով ընտրողների քվեների 8,34 տոկոսը, չկարողացավ հաղթահարել 10 տոկոսանոց ընտրաշեմը և տեղ ունենալ խորհրդարանում, այնուամենայնիվ այն շարունակում է մնալ երկրի առաջատար և ազդեցիկ կուսակցությունների շարքում: 2004 թ. գարնանը կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Գորշ գայլերը» գրավեց 3-րդ տեղը՝ զիջելով միայն ԱԶԿ-ին և ԺՀԿ-ին:

Ուղեցույցը դուրան, նպատակը՝ Թուրան

Ըստ Վ. Բաղումյանի

Ժամանակակից պանադրբեջանական շարժումը

(«Ալիք» օրաթերթ, 6 հուլիսի, 2006 թ.)

Պանադրբեջանական նորօրյա շարժման արմատը պանթուրքիզմի ցեղապաշտական գաղափարախոսությունն է: Սա անմիջական սպառնալիք է **ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի համար:**

Մի քանի ազդակ են սատարել պանթուրքիզմի այսօրվա ադրբեջանական տարբերակի արագ թափ ստանալուն, որոնցից կարելի է հիշատակել՝

ա. նավթային ընկերությունների շահերը, որոնք համընկնում են ադրբեջանական տարրի (և թուրքական՝ ընդհանրապես) շահերի, այդ թվում՝ Մեծ Ադրբեջանի գաղափարի հետ (ինչպես եղավ Խորհրդային Միության պարագայում, հատկապես 2-րդ աշխարհամարտի տարիներին),

բ. Արևմուտքի (ներառյալ՝ Իսրայելի) և Իրանի հարաբերությունների գերլարվածությունը, առավել ևս՝ կապված միջուկային հակամարտության հետ,

գ. Ադրբեջանի համար ղարաբաղյան հարցում բանակցությունների միջոցով իր ազգայնամոլ մոտեցումների՝ հաշտ լուծման հասնելու անհավանականությունը և դրանից բխող հուսախաբությունը,

դ. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցով Թուրքիայի վրա միջազգային ճնշման վերացմանը միտված նույն երկրի պետական հակադիր ծրագրերը,

ե. միջազգային ասպարեզում Հայկական սփյուռքի ազդեցությունը չեզոքացնելու համար թուրք-ադրբեջանական գաղութների կազմակերպման նոր գործընթացը տարբեր երկրներում մի դրոշի ներքո (պանթուրքիստական):

Նպատակ և միջոց. Պանադրբեջանական շարժման վերջնական նպատակը Մեծ Ադրբեջանի ստեղծումն է, որի մեջ, բացի ներկա Ադրբեջանի Հանրապետությունից, պիտի մտնեն ամբողջ Ղարաբաղը, Հայաստանից խոշոր տարածքներ, Իրանի Ատրպատական ու Ասթարա նահանգները ու որոշ շրջաններ Վրաստանից և Ռուսաստանի Դաշնությունից:

Որպես գլխավոր զենք՝ թուրք-ադրբեջանական դաշնադրությունն օգտագործում է թուրքացման (turkafication) միջոցը: Եթե նախկինում թուրքացման գործն առաջ էր տարվում գլխավորապես ռազմական բռնագրավումներով, ապա այժմ հիմնականում ընթանում է «փափուկ» (soft) ձևերով, որոնցից են.

ա. թուրքերենի տարածումը, ապա՝ լեզվի ու ցեղային պատկանելության նույնացումը,

բ. պատմության խեղաթյուրված վերագրառումը՝ պանթուրքիստական գաղափարներին ու ծրագ-

ռերին համահունչ: Այս հարցում նրանք հետևում են Աբաթուրքի խորհրդին, ըստ որի՝ պատմությունը գրի առնելը նույնքան կարևոր է, ինչքան պատմության կերտումը: «Պատմաշինությունը» թուրքերը պաշտոնապես սկսել են դեռևս Թուրքիայի Հանրապետության հիմնադրման օրվանից՝ նպատակ ունենալով.

ա. ազգակերտումը (նաև՝ հպատակ ժողովուրդների ձուլումով),

բ. ազգայնական-ցեղապաշտական սնապարծությանը մղում տալը, թրքության մեջ ոգի ստեղծելն ու մոբիլիզացնելը,

գ. մրցակից և հարևան ժողովուրդների պատմական ժառանգությունների յուրացումը և արդյունքում՝ թուրք զավթողականության համար պատմաիրավական ենթահող պատրաստելը:

Զավեշտական են նաև մյուս ժողովուրդներին թուրք համարելու փորձերը: (Քրդերին լեռնային թուրքեր, տաջիկներին, ամերիկյան մայրցամաքում բնակվող կարմրամորթներին, բոսնիացիներին և, վերջապես, հայերին): Հայերը, իբր, սերում են կորած թուրք մի ցեղախմբից:

Այսպիսով, պատմական խեղաթյուրումը սահման չի ճանաչում, աներևակայելիորեն չափազանցված է և կատարվում է գիտականորեն չհիմնավորված ընդհանրացումների միջոցով:

<u>Կազմակերպություն և ղեկավարություն.</u> պանադրբեջանական (ինչպես նաև պանթուրքական) մերօրյա շարժման առանցքային կազմակերպությունը «Գորշ գայլեր» ֆաշիստական խմբակցությունն է, որը կապեր ունի թուրքական մաֆիայի հետ: Նրանք են այդ գաղա-

փարախոսությունը վերակենդանացրել Ադրբեջանում ետխորհրդային տարիներին, իսկ այժմ տարածում են Իրանի թուրքախոս բնակչության մեջ: «Գորշ գայլերի» ազգայնամոլական գաղափարները լայն տարածում ունեն Թուրքիայում՝ թուրքական սպայակույտի, անվտանգության կառույցների, տնտեսական մաֆիայի, ինչպես նաև որոշ քաղաքական կուսակցությունների ու սրանց ղեկավարության շրջանում: Թուրք ղեկավարներից «Գորշ գայլերի» կազմում են նաև Մերալ Աքսեները, պատմաբան Դիքլերը, ադրբեջանցիներից՝ Վաֆա Ղուլիզադեն, իրանցի ադրբեջանցիներից՝ Մահմուդ Չեհրեգանլին և Ռահիմ Շահբազին:

Մ. Չեհրեգանլին Իրանի անջատողական ադրբեջանցիների գլխավոր ղեկավարն է: Ներկայումս ղեկավարում է SANAM (Հարավային Ադրբեջանի ազգային զարթոնքի շարժում) հակահիրանական ու հակահայկական խմբակցությունը:

Հակահայկական քարոզչության մեջ ներառում են Ղարաբաղի խնդիրը (այդ շարքից՝ Խոջալուի «ցեղասպանությունը»), Հայոց ցեղասպանության հերքման հարցը, Իրանական Ատրպատականում, իբր, 20-րդ դարասկզբին հայերի կողմից տեղի ժողովրդի նկատմամբ իրականացրած ջարդերը (Անդրանիկ և այլն), Դաշնակցության գործած «ոճիրները» Ատրպատականի բնակչության և Ադրբեջանի դեմ, հայ-պարսկական բարեկամության հակաատրպատականական (հակաադրբեջանական) բնույթը և այլն: Այսօր ՍԱՆԱՄ-ը հայտարարում է, որ ամբողջ աշխարհում ունի իբր 24 ներկայացուցչություններ (ԱՄՆ, Եվրամիություն, Թուրքիա, Եվրախորհրդարան և այլն):

Մյուս ադրբեջանական պանթուրքիստ խմբակցություններին զուգահեռ կարելի է հիշատակել UAM-ը, AZNF-ը, SANLM-ը:

Միջազգային հովանավորություն. Ադրբեջանական ազգայնականության վերարթնացումը համընկնում է ԱՄՆ-ի, Եվրամիության, Թուրքիայի և Իսրայելի աշխարհաքաղաքական շահերի հետ: Նախ՝ դրա հաջողության դեպքում վերանում է Իրանի ազդու դերակատարությունը Կենտրոնական Ասիայից և Միջին Արևելքից մինչև Արևմտյան Ասիա ու Եվրոպա անցնող նավթի ու գազի փոխադրական գծերի վրա: Երկրորդ՝ Կասպից ծովի տարածաշրջանում ստեղծվում է մի երկրորդ կենտրոն՝ Պարսից ծոցից քաղաքականապես անջատ, որն այս շրջանի արաբական պետություններին և Իրանին զրկում է միջազգային մակարդակով ազդեցություն ունենալուց և նավթի գների ճշտման մեջ որոշիչ դեր ստանձնելուց: Հետևաբար, պատահական չէ այն հովանավորությունը, որ նրանք ստանում են թե՛ քաղաքական, դիվանագիտական, թե՛ գիտահետազոտական և թե՛ լրատվամիջոցների շրջանակներից: Իրականությունից հեռու չի լինի, եթե ասենք, որ պանադրբեջանականությունը հրահրվում է առաջին հերթին ոչ ադրբեջանցիների միջոցով:

Հետաքրքիր է արևմտյան լրատվամիջոցների լռությունը «Գորշ գայլեր» ֆաշիստական խմբակցության գործունեության մասին: Առանց նրանց բնույթն ակնարկելու՝ երևույթները մեկնաբանվում են ազգային ինքնորոշման, ժողովրդավարության և մարդու իրավունքների շրջագծում: Այս ներողամիտ մոտեցումը բացատրվում է նաև տիրող հակաիրանական մթնոլորտով:

Հակադրված ուժեր: Պանադրբեջանական շարժմանը

հակադրվող ուժերի մեջ առաջինը պետք է նշել Իրանը: Պանադրբեջանականները, հավատարիմ իրենց կեղծ պատմաշինության արհեստին, հայտարարում են, թե իբր ի սկզբանե գոյություն է ունեցել մեծ Ադրբեջան երկիրը, որը հետո բռնագրավվել է ցարական Ռուսաստանի ու թագավորական Պարսկաստանի կողմից և բաժանվել նրանց միջև, իսկ այսօր հյուսիսային բաժինն անկախացել է, բայց հարավային հատվածը դեռ սպասում է իր ազատագրմանը: Այս «թյուրիմացությունը» մեծ մասամբ ժառանգվել է խորհրդային ժամանակների հետևողական քարոզչությունից, որը որոշ չափով մուտք է գործել նաև իրանական ձախ գրականության մեջ (օրինակ՝ «պարսկական շովինիզմի» մասին զրույցները): Ադրբեջանում դասագրքերը ողողված են հակահայկական ու հակաիրանական նյութերով, և Իրանի հյուսիսարևմտյան նահանգները ներկայացված են որպես Հարավային Ադրբեջան:

Պանադրբեջանականները պարսկական մշակութային ժառանգությունը յուրացնելու գործունեություն են ծավալել: Գրողներ, բանաստեղծներ, ազգային հերոսներ, տոներ և այլն ներկայացվում են որպես թուրքական հարստություն: Անջատողականներն այնքան առաջ են անցել, որ բացեիբաց պանթուրքիստական թռուցիկներ ու գրքույկներ են ցրում Իրանի ադրբեջանցիների շրջանում և ցույցերի ժամանակ պարզում են Ադրբեջանի Հանրապետության դրոշը: Իրանի մասնատման ծրագիրը ներկայացվել է դեռևս 1979 թվականին Բեռնարդ Լուիսի կողմից, համածայն որի՝ մասնատումը պիտի իրականացվի ցեղային ու լեզվական բաժանման գծերին համապատասխան:

«Գորշ գայլերին» և ընդհանրապես պանթուրքիստներին հակադրված են նաև քրդերը, Թուրքիայում և Ադրբեջանում բնակվող մյուս ազգային ու կրոնական փոքրամասնությունները, Թուրքիայի աշխատավորական շարժման ղեկավարությունը, ձախ հոսանքները, մտավորականությունը, ուսանողությունը և մարդու իրավունքների պաշտպանները:

Հրանտ Դինքը և «Գորշ գայլերը»

Հրանտ Դինքը ծնվել է 1954 թ. սեպտեմբերի 15-ին, Մալաթիայում: 7 տարեկանից տեղափոխվել է Ստամբուլ, ավարտել տեղի հայկական միջնակարգ դպրոցը: Ապա սովորել ու ավարտել է Ստամբուլի համալսարանի կենդանաբանության բաժինը, ստացել է փիլիսոփայի մասնագիտություն: 1996 թվականից հրատարակել է «Ակոս» (Agos) թերթը՝ դառնալով նրա գլխավոր խմբագիրը, սպանվել է Ստամբուլում 2007 թ. հունվարի 19-ին: Ոճրագործը Օգյուն Սամաստն էր, 17 տարեկան, որը «Գորշ գայլեր» կազմակերպությունից առանձնացած «Մեծ միավորում կուսակցության» (Buyuk Birlik Partisi) անդամ էր: Նույն կազմակերպությունն էր նախապատրաստել Տրապիզոնում կաթոլիկ քահանայի սպանությունը, իսկ դա նախապատրաստած նույն կազմակերպության մի այլ անդամ՝ Յասին Հայալն էր զենք ու փող տվել Դինքին սպանող Օգյուն Սամաստին, որը, Դինքին գնդակահարելով, բացականչել էր. «Ես գյավուրի եմ սպանել»: Ըստ ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանի՝ Դինքին սպանելու որոշումը կայացվել է

ավելի «վերևներում»: Նրան 18 այլ կասկածյալներից 12-ի հետ ծերբակալել էին: Ըստ «Sabah» թերթի՝ Դինքի սպանությունը կազմակերպել է Գաղտնի հետախուզական ծառայության «JITEM» ստորաբաժանումը, որի գոյության փաստը մշտապես հերքվել է պաշտոնյաների կողմից: «Էրգենեքոնի» մեղադրականում նշվում է, որ սպանությունը կազմակերպել են «JITEM» խումբը, պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը և Անվտանգության ուժերի ստորաբաժանումներից մեկը:

Դինքը բազմիցս հետապնդվել էր իշխանությունների կողմից, սպառնալիքներ էր ստացել նախևառաջ աջ ծայրահեղ ուժերի կողմից:

Դինքի սպանությունը դեռ կարելի էր պատահականություն կամ սխալմունք համարել, եթե նա հայտնի չլիներ իր հայրենասիրությամբ և «Ակոս» թերթի բովանդակային էությամբ: Մահվանից 2 օր առաջ տված իր հայտարարության մեջ այն հարցին, թե ինչու է թերթը տպվում երկու լեզվով, նա պատասխանել էր, որ հենց դրա համար է այն հասարակության մեջ որոշ ազգայնական ուժերի կողմից այդքան վտանգավոր համարվում: Իսկ այն հարցին, թե իրո՞ք այդքան վատ է Թուրքիայում հայ լինել, ասել էր, թե, եթե մեկը լեզուն ատամների տակ է պահում, դժվար թե խնդիրներ ունենա: Իսկ թերթն, ըստ նրա, դարձել է Թուրքիայի և հայ հասարակությունների միջև իսկական կամուրջ:

Դինքն ասում էր, որ ինքը կցանկանար պայքարը շարունակել Թուրքիայի ներսում: Նա համարում էր, որ ինքը գտնվում է իր հայրենիքում, որտեղ ապրել են իր նախնիները:

Նա մասնավորապես «անզգուշություն» էր ունեցել

քննադատելու Թուրքիայի պետական օրհներգը, և որ այդ օրհներգը պարտավոր են կատարել նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Դինքը քննադատել էր նաև Թուրքիայի դպրոցների աշակերտական երդումը, որում ասվում է. «Ես թուրք եմ, ես ազնիվ եմ, ջանասեր», որը պետք է ասի ամեն երեխա-դպրոցական՝ անկախ ազգային պատկանելությունից:

Նրան փորձում էին դատապարտել Թուրքիայի օրենսգրքի 301 հոդվածով՝ «Վիրավորանք թրքությանը», որով փորձում էին դատել թուրք հանրահայտ գրող, 2006 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքին՝ 1,5 միլիոն հայ զոհերի մասին խոսելու համար:

Ֆրանկֆուրտում ունեցած իր մի ելույթում Դինքն ասել էր. «Եվրոպան կարևորագույն դեր է ունեցել 1915 թ. ողբերգության մեջ՝ շահարկելով Հայկական հարցը և մինչ օրս էլ այն օգտագործում է իր նպատակների համար»: Թուրքահայ լրագրողը համոզված էր, որ ցեղասպանությունը պիտի ճանաչվի, և ճանաչողը պիտի լինի Թուրքիան՝ թուրք հասարակության ճնշման տակ և ոչ թե կախված պետք է լինի Ամերիկայի կամ Եվրոպայի քաղաքական խաղերից: Նա գտնում էր, որ «1915 թ. ցեղասպանության ճանաչումը ոչ ժողովրդավար Թուրքիայի կողմից քիչ բան կտա հայերիս»:

Նա կողմնակից էր Թուրքիայի՝ Եվրոմիություն մտնելուն, համարելով, որ դա Հայոց ցեղասպանության ճանաչման ճանապարհ է, պատճառաբանելով, որ Եվրոմիության անդամ դառնալով Թուրքիան կենթարկվի ժողովրդավարացման, այսինքն՝ Դինքը փորձում էր Թուրքիան ներսից փոխելով հասնել Հայ դատի արդար

լուծմանը:

Թուրքիայում լրագրողի մահից հետո կազմակերպվեցին բազում ցույցեր՝ «Միլիոն ու կես + 1» և այլ կոչերով, նույնիսկ՝ «Այսօր բոլորս Հրանտ ենք, բոլորս հայ ենք» կոչերով: Սակայն այս բոլոր զղջման ու ափսոսանքի խոսքերը շատերի կարծիքով միֆ է. Թուրքիայում, ընդհակառակը, զարգացում է ապրում նացիոնալիզմը, և մեծ մասի կողմից կարծես խրախուսվում է կատարվածը, ինչը, իհարկե, չի կարելի ասել Թուրքիայի ողջ մտավորականության մասին: Այն թուրքական ԶԼՄ-ները, որոնք ունեն անգլերեն տարբերակ, դատապարտում են կատարվածը՝ հասկանալով, որ իրենց կարդում է ողջ աշխարհը, իսկ այն թերթերը, որոնք անգլերեն տարբերակ չունեն, պաշտպանում են մարդասպանին:

Մեծ աղմուկ բարձրացրեց 2004 թ. փետրվարի 6-ին Ստամբուլի «Ակոս» թերթում հանգուցյալ Հրանտ Դինքի տպագրած հոդվածն այն մասին, թե Թուրքիայի Հանրապետության գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ առաջին կին օդաչու և Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենը, իրականում հայուհի է: Նա մեկն է Հայոց ցեղասպանության ժամանակ որբացած հայ երեխաներից, և նրա իսկական անունն է Խաթուն Սեբիլջյան: Եվ եթե ապացուցվում է, որ այդ խորհրդանիշը թուրքերի պատկերացմամբ թշնամի «գյավուր» հայ է, ապա նրանց ինքնագիտակցության մեջ ինչ-որ բան, այնուամենայնիվ, կոտրվում է: Միլիոնավոր թուրքեր, ովքեր մեծացել են հայերի հանդեպ ատելության մթնոլորտում և որպես խորհրդանիշ պատկերացրել Գյոքչենին, հիմա վստահաբար ապրում են հոգեբանական ճգնաժամ, քանի որ պարզվում է, որ իրենց վեհության խորհրդանիշն իրա-

կանում ծագումով հայ է: Հրանտ Դինքը ասել է. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ՝ ինքնության խնդրի»:

Ըստ որոշ տեղեկությունների՝ հենց այդ հոդվածից հետո է, որ «Ակոս» թերթի խմբագրատան առջև իրականացվեցին բազում ցույցեր, որտեղ թուրք ազգայնականները գոռում էին. «Հրա՛նտ, դու մեր թիրախն ես»:

Էրգենեքոն + Գորշ գայլեր - ASALA առճակատումներ

(«Հայոց Աշխարհ», 2008 թ. օգոստոսի 22, կրճատումներով) Ըստ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության, խորանում են կասկածները, որ «Էրգենեքոն» թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպությունը կանգնած է եղել նաև 2007 թ. Մալաթիայում քրիստոնեական հրատարակչության երեք աշխատակիցների սպանության ետևում:

Վերջերս հայտնաբերված մի փաստաթուղթ վկայում է, որ Թուրքիայի հետախուզության ազգային կազմակերպությունը վճարել է հանցավոր անցյալով ազգայնականներին քաղաքական սպանություններ կատարելու համար: Նրանց գործողություններն ուղղված են եղել նաև Հայկական նորագույն զինյալ պայքարի մարտիկների դեմ:

«Էրգենեքոն» ահաբեկչական խմբավորման գործով հետաքննության ընթացքում հայտնաբերված նոր փաստաթղթի համաձայն՝ Թուրքիայի հետախուզության ազգային կազմակերպությունը (MIT) ծայրահեղ

ազգայնականներին վճարել է ապօրինի գործողությունների համար: Նման կասկածներ եղել են նաև նախկինում, սակայն սա առաջին փաստաթուղթն է, որը մանրամասներ է պարունակում, թե ինչպես է MIT-ը գինել և ֆինանսավորել Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») ազգայնական խմբերի անդամների՝ քաղաքական սպանություններ իրականացնելու նպատակով:

«Էրգենեքոնի» արխիվներում հայտնաբերված փաստաթուղթը բացահայտում է մի շարք ազգայնականների միջև կնքված մի գործարք: Վերջիններս երկրից փախուստի են դիմել 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինված հեղաշրջմանը նախորդած գործողություններին մասնակցելուց հետո:

Հանցավոր անցյալ ունեցող «գորշ գայլերին» վարձել էին Հայկական նորագույն զինյալ պայքարի մարտիկներին (ASALA) սպանելու համար: Այս տեղեկությունները պարունակող գաղտնի փաստաթուղթը հայտնաբերվել է Թուրքիայի աշխատավորական կուսակցության գրասենյակում: Վերջինիս առաջնորդ Դողու Փերինչեքը ևս ձերբակալված է «Էրգենեքոնի» հետ կապեր ունենալու համար: Ի դեպ, նա արդեն դատապարտվել է Շվեյցարիայում՝ Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնելու մեղադրանքով: Իսկ «Հայկական հարց 2000-2002» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ 1980-ի հեղաշրջումը կազմակերպած գեներալները որոշել էին վրեժ լուծել ASALA-ից թուրք դիվանագետների վրա հարձակումներ կատարելու համար: Գործողությունը պետք է ղեկավարեր հետախուզության ազգային կազմակերպության պաշտոնյա

Մեթին Գյունյոլը, որ ինքնությունը թաքցնելու նպատակով պաշտոնաթող է եղել և այլ անվամբ մեկնել Եվրոպա: Այնտեղ հանդիպելով «Գորշ գայլեր» կազմակերպության նախկին անդամ Ջենգիզ Ջոմերթին, հիմնել է 12 հոգանոց մի խումբ: Պետության միջոցներից խմբին ամսական 4700 դոլար էր հատկացվում:

Հենց այս խումբն է պատասխանատու 1984 թ. մայիսի 3-ին Փարիզում Հայոց ցեղասպանության հուշարձանի պայթեցման համար: Ֆրանսիական ոստիկանությունը շուտով պարզել էր, որ գործողության պատասխանատուն թուրքական MIT-ն է:

2009 թ. մարտի 29-ին Թուրքիայում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ներկայացած էին 19 կուսակցություններ ու մի շարք անկախ ներկայացուցիչներ: Ցուցակը ղեկավարում էր Էրդողանի «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որը 2004 թ. տեղական ինքնակառավարման մարմինների և 2007 թ. համընդհանուր պառլամենտական ընտրություններից հետո զգալիորեն զիջել էր իր դիրքերը: Իրենց դիրքերն ավելի էին ամրապնդել «Ժողովրդա - հանրապետական» կուսակցությունն ու «Ազգայնական շարժումը», այսինքն՝ «Գորշ գայլերը», որոնք ուժեղ են հատկապես ռեգիոններում: Ստորև բերված է 2009 թ., 2007 թ. պառլամենտական ու 2004 թ. ընտրությունների ընթացքում այս 3 կուսակցությունների հավաքած ձայների թիվը.

	2004 թ.	2007 թ.	2009 թ.
ԱԶԿ	41.67%	46.58%	38.83%
ԺՀԿ	18.23%	20.88%	23.12%
ԱՇԿ	10.45%	14.67%	16.07%

Այս ամենը ցույց է տալիս, որ Թուրքիայում «Գորշ գայլերը» այսօր էլ իրենցից մեծ ուժ են ներկայացնում, որ նրանք անցյալի ինչ-որ կուսակցություն չեն:

Թուրքիայում առկա ազգայնամոլությունը աճ է ապրում: Թուրքիայի Հանրապետությանը թուրք-հայկական հարաբերությունների կարգավորումը պետք է այնքան, որքան պետք է ցույց տալ Եվրոմիությանը:

Թուրքերի մոտ կա հոգեկան մտագարություն. ամեն բացասական, սադրիչ գործողության ետևում փնտրում են հայի հետք: Այդ հոգեկան մտագարությունը առկա էր դեռևս 1890 թվականին, երբ սուլթանը մշտապես երազում տեսնում էր, թե «հայերը իր վրա հարձակված իրեն խողխողում են»:

Թուրքիան ամեն առիթ օգտագործում է, որ հայերին ճնշի, նորից գործի դնի իր պանթուրքական ծրագրերը: Թուրքիան ցույց է տալիս, թե ուզում է հայերի հետ նորմալ հարաբերություններ հաստատել, բայց հերիք է, որ միջազգային քաղաքական արենայում քննարկման դրվի հայերի հետ կապված որևէ հարց, Թուրքիան ցույց է տալիս իր իրական դեմքը և սկսում հանդես գալ հայատյաց հայտարարություններով: Այսպես օրինակ, հերիք էր, որ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ու Շվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշումներ ընդունվեին, որ Թուրքիայի վարչապետ, «Արդարություն և զարգացում» կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեր ԲԻԲԻՍի-ի թուրքական ծառայությանը. «Շվեդիայի խորհրդարանում ու ԱՄՆ-ում անցկացված քվեարկությունները, որոնք Առաջին աշխարհամարտի

տարիներին տեղի ունեցած դեպքերն անվանում են «ցեղասպանություն», վտանգում են Հայաստանի հետ խաղաղության ջանքերը»: Խոսելով, իր խոսքերով ասած, Թուրքիայում ներկայումս անօրինական աշխատող «100 հազար» հայերի մասին՝ էրդողանն ասում է, թե Անկարան մինչ այժմ հանդուրժել է նրանց ներկայությունը: «Սակայն ի՞նչ կանեմ վաղը: Կանեմ հետևյալը: Նրանց կասեմ, արագացրեք, ետ գնացեք ձեր երկիր: Ես պարտավոր չեմ նրանց պահել իմ երկրում»:

Այսպիսին է եղել նրանց՝ թուրքերի քաղաքականությունը, այսպես է նաև հիմա. սա պետք չէ մոռանալ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ստելլա Բրամ, Մեհմեթ Ուլգեր - «Գորշ գայլեր»՝ հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին: Հոլանդերենից թարգմանեց Արսեն Նազարյանը, Եր., Զանգակ-97, 248 էջ. 2003 թ.

2.Հրաչիկ Ռուբենի Սիմոնյան - «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», Եր., Հայաստան,1991 թ., 630 էջ

3. Л.Н.Гумлиев - Вехи истории "Древние тюрки" <<Кристалл>>, 2003 г.-576 стр.

4. Александр Сафронов - **Очернение Турции** Независимое военное обозрение, электр. Версия прил. к "НГ" (ЭВНВО). 9 января 1998 г.

5.ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պաշտոնաթերթ «Երկիր», Հուլիսի 14, 2006 թ.

6.Bozkurt-net, վեբ-կայք.

7.muhsinbozkurt.net

8.turan.tc

9.unibozkurt.com

10.ulkuocaklari.org.tr

11.hedefturan.com

12. Արթուր Դումանյան - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ: Հ. 4-րդ:

Ազգայնական Շարժման կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ. (Milliyetci hareket partsi)

13. Արթուր Դումանյան - Մերձավոր Արևելք: Հ. 3-րդ: Երևան, 2006 թ.: «Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ»:

14. Արթուր Դումանյան - Մերձավոր Արևելք: Հ. 2 –րդ: Երևան, 2005 թ.: «Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին»:

15. Արթուր Դումանյան - Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ: Հ. 5-րդ:: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունները Թուրքիայում 1960-70-ական թթ.

16. Сафрастян Рубен - Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդներ;Հատոր 23: Возбращенение " серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-85 гг.)

17. Կարեն Խանլարյան - Հայ-էթնոկրոնական տարրը Արևմտյան Հայաստանում (1991-2005 թթ.) noravank. am

18.basbug.itgo.com

19.irevan-az.com

20. Կարեն Խանլարի (Խանլարյան)-«Պաշտոնական» հայերը Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.) noravank.am

21. Ռուբեն Մելքոնյան - Իսլամացած հայերի խնդիրը Թուրքիայում noravank.am

22. Ջոն Կիրակոսյան - Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ:

22. «Արարատ» ՌԿ:

ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

«ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ»

Համառոտ ուրվագծեր

Երևան 2010
Հրատարակության պատրաստեց
«ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ն

Ашот Авагян

"СЕРЫЕ ВОЛКИ"

Краткие очерки

Ереван 2010
Патриотическая общ. организация
"ВО ИМЯ ОТЕЧЕСТВА"

ASHOT AVAGYAN

«GREY WOLVES»

Summary Outlines

Yerevan 2010
IN THE NAME OF FATHERLAND,,
Patriotic non gov. organization

Խմբագիր՝
Զոհրաբ Մուղդուսյան

Սրբագրիչ՝
Արմենակ Դազինյան

Չափը՝ 70x100 1/32: Ծավալը՝ 4 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 400 օրինակ:
Տպագրվել է Ա/Հ «Գևորգյան Կոնստանտին» տպարանում

BOZKURT

TURAN

(1926-1943)
24-42